№ 197 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 6 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 6 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 197

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". TIFLIS, Rédaktion du journal „MSHAK".

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 4 ՌՈՒԲԼԻ։

Սեպտեմբ. 1-ից մինչև հոկտ. 1-ը 85 կ.: Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ
Ժողովրդ. ներկայացումներ կազմակերպող
ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ
Այսօր, հինգշաբթի, սեպտեմբերի 6-ին
ՀԱՅՈՑ ԴՐ. ԸՆԿ. ԹԱՏԵՐԱՍԷՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ պ. ԱԲԷԼԵԱՆԻ
ԵՒ ԱՅԼ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ
Կը ներկայացնէ
I
ԿՐԷՉԻՆՍԿՈՒ
ՀԱՐՍԱՆԻՔԸ
Կոմէդիա 3 գործ., հեղ. Սուխօվ-Կօբիլինի,
Թարգմ. Աբէլեանի և Արաքսեանի
II
Խաղիր № 1371
Վօդեվիլ 1 գործ., հեղ. Վ. Ն. Կարպենկօյի
Մասնակցում են՝ տ. տ. Մանուչարեան, Ցասմէկ, պ. պ. Աբէլեան, Գալստեան, Դաւիթ-Խանեան, Լազարեան, Ղազարեան, Ղուչչեան, Ցարութիւնեան և ուրիշ.։
Սկիզբն է երեկոյեան ժամը 8½-ին։
Հերթ. կարգադրիչներ՝ Գ. Երիցեան
Ա. Թումանեան
661. 1—1

Կ. Հ. ԲԱՐ. ԸՆԿ. ԴԱՀԼԻՃՈՒՄ
(Արաս-Արաղեան հրապ.)
Շաբաթ, սեպտեմբերի 8-ին
«ԸՆԿԵՐԻ» խմբագիր ՍԵԴՐԱԿ ԹԱՌԱՅԵԱՆԸ
Կը դասախօսէ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԵԱՆ
ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(Հոգեբանութիւնը որպէս հիմք բարոյագիտութեան)
Սկիզբն է երեկոյեան ճիշդ ժամը 8-ին։
Տեղերի գները՝ 50, 40, 30 և 20 կ.
Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ՝ 1) «Ընկերի» գրասենեակում, գրավաճառանոց Ժողովարանի տակ, Գօլօվ. պր.-ի վրա, 2) Գրավաճառանոց «Գուտտենբերգ», Երևանեան հրապ., 3) Շաբաթ, երեկ. ժամը 6-ից մինչև 8-ը դահլիճի մուտքում։
(ա.օ.) առ. 660. 3—1

ՕՐԻՈՐԴ ԹԱՀԹԱՃԵԱՆ
Վերադառնալով ամարանոցից՝ շարունակում է դասեր տալ դաշնամուրի վրա։ Հասցէն՝ Грибоѣдовск. 13, кв. 7.
Կարելի է տեսնել առ. ժամը 10—12-ը։
(հ.կ.) առ. 632. 6—3

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ
ПОЛНОМѢРНЫЕ
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.
(հ. կ.) 291. 50—36

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Վերադառնալով ամարանոցից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը։
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
Ընդունելութիւնը ամէն օր ) 10—11 ժ. առ. (երեխաների) ) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. տէլէֆօն 388.
(և.հ.կ.) առ. 606. 10—8

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Համալի Մասյահարբիրը
Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
Գինն է 30 կօպ.
(Ծանապարհածախքով՝ 38 կօպ.)
Այս գրքի վաճառումից գոյանալիք գումարը յատկացվելու է «ՄՇԱԿԻ» ապահովութեան ֆօնդին։
Հասցէն՝ Тифлисъ, Ред. газ. „Мшакъ" կամ Tiflis, Rédaction du journal arménien „Mschak"

## ԲԱԶՄԱՉԱՐՉԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ

### III

Մեր եզրակացութիւնը երէկ այն եղաւ, որ Թիւրքիայի հայութեան աղէտներին արմատական դարման անելու միակ միջոցը պէտք է որոնել կոմս Բերհտօլդի առաջարկի մէջ։

Ո՞րն է այդ առաջարկը։

Աւստրիական արտաքին գործերի մինիստր կոմս Բերհտօլդը, ի նկատի ունենալով Թիւրքիայի ներկայ վիճակը, երեք կէտերից բաղկացած հետեւեալ առաջարկն է արել.

1) Բոլոր մեծ պետութիւնները միահողոյն պէտք է գործեն. 2) Պէտք է խորհուրդ տալ Թիւրքիային, որ աստիճանական ապակենտրօնացման միջոցներ ի գործ դնէ ի նպաստ օսմանեան տէրութեան ամէն ազգութիւնների. 3) Պէտք է խրատել բալկանեան տէրութիւնները հանդարտ մնալու։

Այս առաջարկի մէջ էական կէտը երկրորդն է, ուստի և այստեղ առաջ ենք բերում նրա ֆրանսիական բնագիրը.

„Il propose de conseiller á la Turquie de prendre en faveur de toutes les nationalités de l'empire ottoman des mesures de décentralisations progressives".

«Առաջարկում է խորհուրդ տալ Թիւրքիային ընդունել ի նպաստ օսմանեան կայսրութեան բոլոր ազգութիւններին պրօգրեսիվ ապակենտրօնացման միջոցներ»։

Գործադրելով օսմանեան կայսրութիւնը կազմող ամէն մի ազգութեան վերաբերմամբ պրօգրեսիվ կամ աստիճանական ապակենտրօնացման սիստեմը, կոմսը կամենում է փրկել Թիւրքիան ապագայ քայքայումից և կործանումից։

Որքան էլ Թիւրք կառավարութիւնը արուեստական բաժանումներով և գաւառների քմահաճոյ դասաւորութիւններով կամենար հաւատացնել, թէ Թիւրքիայում հայերը, օրինակ, ոչ մի տեղ, հոծ ազգաբնակութիւն չեն կազմում, կամ նոյնպէս ասորիները և այլք, բայց անհերքելի փաստ է, որ որոշ շրջաններում, որոշ բնական սահմանների մէջ, ամէն մի ազգութիւն խիտ և տիրապետող ազգաբնակութիւն է կազմում։ Թիւրքիայում կայ մի շրջան, ամփոփված որոշ սահմանների մէջ, որ իրաւամբ կարող է կոչվել Հայաստան։

Հետեւաբար, եթէ մի քանի գլխաւոր հայաբնակ նահանգների տրվի որոշ վարչական կազմութիւն, ինչպէս եղել է Լիբանում, հայերը կարող են որոշ տերրիտօրիայի վրա խիտ, հոծ ազգաբնակութիւն կազմել։

Եւ, ուրեմն, Թիւրքահայաստանը կարող է նոյնպէս օգտվել կոմս Բերհտօլդի առաջարկով, քանի որ այդ առաջարկը վերաբերում է անխտիր օսմանեան կայսրութեան բոլոր ազգութիւններին և ոչ միայն բալկանեան ազգութիւններին, ինչպէս սովորաբար կարծվում է։

Արդ, ինչ է աստիճանական ապակենտրօնացումը։

Այժմեան դրութեամբ, բոլոր նահանգների կառավարութիւնը—վարչական, դատաստանական, ֆինանսական, կրթական, երկրագործական—ամփոփված է կենտրօնական կառավարութեան, այն է Բ. Դրան ձեռքում։ Ընդունված սիստեմ է, որ ամէն մի երկրի զինուորական, ծովային արտաքին քաղաքականութեան գործերը պէտք է ամփոփված լինեն կենտրօնական իշխանութեան ձեռքում, բայց ուրիշ գործերի վարչութեան և կառավարութեան մէջ, մանաւանդ տեղական կարիքներին վերաբերեալ, կարելի է որոշ ապակենտրօնացում մտցնել, այսինքն մասամբ անել տեղական ժողովուրդը իր գործերի կառավարութեան։ Օրինակ, Թիւրքահայաստանին կամ հայ ժողովրդին տրվում է իրաւունք դասաւորել, հաւաքել տուրքերը,— թէ ընդհանուր և թէ տեղական—վճարել պետական գանձարանին ընդհանուր տուրքերը, իսկ տեղականները գործադրել տեղական կարիքների, այն է՝ դպրոցների բարեշինութեան, առողջապահութեան, երկրագործութեան զարգացման կարիքների վրա։ Նրան իրաւունք է տրվում պահել նոյնպէս տեղական միլիցիա, որ հսկում է բնակիչների պաշտպանութեան և ապահովութեան վրա։

Այդ սիստեմով կենտրօնական կառավարութիւնը ոչ թէ թուլանում է, այլ աւելի ուժեղանում, որովհետև ազատվելով տեղական հոգսերից՝ նա իր ամբողջ ուժը, իր ամբողջ եռանդը գործ է դնում ընդհանուր, համապետական նշանակութիւն ունեցող խնդիրների համար։

Աստիճանական ապակենտրօնացումը նոյնն է, ինչ որ, օրինակ, զեմստվային վարչութիւնը Ռուսաստանում, այն տարբերութեամբ, որ այդ սիստեմը գործադրվում է ոչ թէ որոշ նահանգների, այլ որոշ ազգութիւնների վերաբերմամբ, ինչ որ Թիւրքիայի պէս մի երկրում ամենից յարմարն է։

Ունենալով տեղական միլիցիա՝ հայերը կարող կը լինեն պաշտպանել իրանց քիւրդերի ագրէսիվ գործողութիւններից, ջարդերից և կեղեքումներից։

Ներկայումս Թիւրքիայի հայաբնակ վայրերում կազմակերպվում են բողոքի միտինգներ, որոնք, ինչպէս հաղորդեցին հեռագիրները, պահանջում են Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածի իրագործումը։ Եւ որովհետև այդ յօդուածի տրամադրութիւնը ամենևին չէ հակասում կոմս Բերհտօլդի առաջարկի տրամադրութեան, մեր կարծիքով՝ Թիւրքահայերը պէտք է ույժ տան այդ առաջարկին։

Միայն ապակենտրօնացման սիստեմով բազմաչարչար Թիւրքահայաստանը կարող է հանգստութիւն գտնել իր մարտիրոսական տառապանքներից։

Հ. Առաքելեան

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

4 սեպտեմբերի

*Սենտմօր-Տուրէն.*—Ֆալիէրը և Պուանկարէն առաւօտեան ներկայ գտնվեցին զօրախաղերի վերջաւորութեանը։ Ֆալիէրը նախաճաշ տուեց Մեծ Իշխան Նիկօլայ Նիկօլայեվիչին, օտարազգի օֆիցէրներին և զօրախաղերին մասնակցած հրամանատար-զօրականներին։ Իր ճառի մէջ Ֆալիէրը շնորհակալութիւն յայտնեց Մեծ Իշխանին զօրախաղերին ներկայ լինելու պատուի համար, ուրախութիւն յայտնեց օտարազգի օֆիցէրների ներկայութեան առիթով, բաժակ առաջարկեց թագաւորների, կառավարութիւնների և ժողովուրդների համար։

Մեծ Իշխանը պատասխանելով Ֆալիէրին, ասաց, որ նա բաղդաւոր է շնորհակալութիւն յայտնելու ֆրանսիական զօրքին սրտագին ընդունելութեան համար, որի մասին կը պահէ անջնջելի յիշողութիւն, բաղդաւոր է ներկայ գտնվելու փայլուն զօրախաղերին, ուր հնարաւորութիւն ունեցաւ անձամբ գնահատել պանծալի ֆրանսիական զօրքի գերազանց զինուորական յատկութիւնները։ Մեծ Իշխանը ամբողջ սրտից ցանկանում է, որ եղբայրութեան ու բարեկամութեան սերտ կապերը աւելի ամուր լինեն Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև. բաժակ առաջարկեց Ֆալիէրի համար, Ֆրանսիայի բարգաւաճման, պանծալի ֆրանսիական զօրքի և նրա հրամանատարների համար և կրկնակի ուրա բացագանչեց ի պատիւ ֆրանսիական զօրքի։

—

*Ժընէվ.*—Իտալացի և Թիւրք պատգամաւորները յայտնում են, որ խաղաղ բանակցութիւնները շարունակվում են. երկու կողմերը ոգևորված են համաձայնութեան յանգելու ցանկութեամբ։

—

*Հռօմ.* — Պատգամաւոր Բէրտօլինիան մեկնեց երէկ՝ Ջիօլիտտիի, զինուորական և ծովային մինիստրների հետ խորհրդակցելուց յետոյ։

Ստեֆանին հերքում է այն տեղեկութիւնը, թէ իբր իտալական կառավարութիւնը օտարազգի դրամատէրերի հետ բանակցութիւններ է վարում Թիւրքիայի համար 600 միլիօնի փոխառութիւն կնքելու մասին։ «Պօպօլօ-Րօմանօն» գրում է. «Բէրտօլինիայի գալուստը և խորհրդակցելուց յետոյ անմիջապէս մեկնելը արդարացնում է այն ենթադրութիւնը, թէ նախնական բանակցութիւնները շուտով կարող են վերջ դնել պատերազմին»։

—

*Բուդապեշտ.*—Պատգամաւորների պալատի նստաշրջանը բանալուց յետոյ օպպօզիցիան վերսկսեց օբստրուկցիան. հաշնօյանքների տարափ տեղաց Լուկաչի և պալատի նախագահ Տիսսի հասցէին, աղմկեց զանազան գործիքներով ու սուլոցով։ Ժամանակ առ ժամանակ թւում էր, թէ պատգամաւորները ձեռնամարտի են սկսում։ Նիստը մի քանի անգամ ընդհատվեց։ Չորրորդ միջամտեց յետոյ կառավարական մեծամասնութիւնը հեռացաւ դահլիճից։ Ոստիկանական տեսուչ Պավլիչը 100 ոստիկաններով մտնում է դահլիճ, որի կենտրօնում ժողովվել էր ամբողջ օպօզիցիան կոմս Անդրաշիի գլխաւորութեամբ. մի ժամ շարունակ Պավլիչը պաշտպանին կերպով աշխատում է դրդել արտաքսված պատգամաւորներին հեռանալ դահլիճից։ Ոստիկանութեանը նեղում են պատգամաւորները։ Ժամը 6-ին անկարգութիւնները շարունակվում են։ Պատգամաւորները յայտնում են, որ կը զիջեն միայն ույժին։

—

*Հաագա.* — Բանալով պարլամենտը՝ թագուհին կարդաց գահական ճառը, որի մէջ ընդգծված է, թէ Նիդէրլանդիայի յարաբերութիւնները բարեկամական են միացած պետութիւնների հետ։

Երբ թագուհին պարլամենտը բանալուց յետոյ վերադառնում էր պալատ, սօցիալիստները, որոնց արգելված էր պարլամենտի բացման ժամանակ անցնել քաղաքով, փորձեցին 20,000 մարդով փակել պարլամենտ տանող փողոցները։ Ոստիկանութիւնը թոյլ չը տուեց, մի քանի անգամ զէնք մերկացրեց և մաքրեց պարլամենտի առաջի հրապարակը։

—

*Վիլհէլմսհաֆէն.*—Կայսրը դիտեց Գերմանական ծովում վարժութիւններ կատարող երեք նաւատորմերն և երկու զօրամասերը, որոնց ընդհանուր առմամբ մասնակցեցին 32,000 նաւաստի 200 ծանր տեսակի թնդանօթներով։

—

*Լօնդօն.*—Կէմբրիջի մօտերը սկսվեցին բրիտանական զօրքի զօրախաղերը։ Զինուորական օդագնացների գործողութիւնները չափազանց աջող են։ Այսօր գալու է թագաւորը։

*Կազաբլանկա.* — Տեղացիների հետ ընդհարվելիս ֆրանսիացիք կորցրին 9 սպանված և 30 վիրաւոր։

—

*Մուկդէն.* — Քաղաքը յայտարարվեց պատերազմական դրութեան մէջ, տրվելով Ջժաօէրսիենին պատերազմական ժամանակի լիազօրութիւններ։

Չինական տեղեկութիւնների համաձայն՝ մօնղօլներն ամենուրեք պարտութիւն են կրում։

Լուրերի համաձայն՝ իշխանները մտադիր են պատգամաւորութիւն ուղարկել Պետերբուրգ օգնութիւն ու պաշտպանութիւն խնդրելու։

—

*Կուլջա.*—Կառավարութիւնը երկիւղ կրելով մօնղօլների արշաւանքից, զօրքեր է ուղարկում չինական Ալտայի սահմանը։

—

*Վիլլա Կուբլէ.*—Օդագնաց Լէնգանիէն բարձրացաւ 5600 մետր բարձրութիւն և այդպիսով սահմանեց համաշխարհային նոր մրցակէտ։

## ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Փոքրիկ մը ազդանշանը

Կ. Պոլիս, 24 օգոստոս

Հայ ազգը տագնապի մէջ է։

Գաւառական առաջնորդութիւններէ ամէն օր պատրիարքարան կը հասնին սրտաճմլիկ մանրամասնութիւններ սիստեմատիկ կերպով գործուող ոճիրներու և աւարառութեանց, մանաւանդ Վանայ և Բաղէշի կուսակալութիւններէն։

Վասպուրականի շրջանակէն առնելի տեղեկութիւնները կը հասնին այս շաբթու, յուսահատութիւն պատճառելով հայ ժողովուրդին, որ բոլորովին յուսահատ օսմ. կառավարութենէն՝ աչքերը չորս կողմ կը դարձնէ յոյսի ու լոյսի նշոյլ մը փնտռելու համար։

Պատրիարք և վարչութիւն շփոթած են, և չենք գիտեր, թէ որուն դիմեն։

Տիրող յուզումը սաստկացուց ներքին գործերու մինիստր Տանիշ-բէյի մէկ անօրինակ կոշտ ու անփափկանկատ յայտարարութիւնը, զոր ըրած էր անցեալ շաբթու Արշարունի պատրիարքին, երբ այս վերջինը՝ մերձաւոր քանի մը շաբաթներու մէջ Հայաստանի զանազան տեղերէն հասած հարստահարութեանց մէկ ցուցակը իրեն ներկայացուցեր էր՝ դարման խնդրելու համար։

Տանիշ-բէյ այս տեսակ դէպքերը այնքան սովորական գտած է, որ յայտարարած է, թէ «եթէ ոճիրներ չպատահէին, կառավարութեան պէտք չէր մնար» և թէ «պատրիարքը աւելորդ ծանծրոյթ յանձն առած էր անձամբ գալով. կրնար գործակատարը ղրկել»։

Տանիշ-բէյ խնդրած է, որ այլեւս պատրիարքը իրեն չգայ այս տեսակ պարագաներու մէջ, այլ միայն գործակատարը ղրկէ, և ինքն անմիջապէս նկատի կառնէ։

Դարձեալ Տանիշ-բէյ կասկածի տակ կը ձգէր հայոց պատրիարքարանի ստացած տեղեկութիւնները։

Արշարունի պատրիարք խորապէս զգացուած մեկնած է մինիստրին քովէն և յաջորդ օրը ուղղակի վարչապետին և Բեհմիլ փաշայի դիմում կատարեց և անոնց մատոյց Տանիշ-բէյի ներկայացուցած յիշատակագրին պատճէնը։ Ղազի Մուխթար փաշա աւելի բարեկամական վերաբերում մը ցոյց տուաւ և իրապէս մինիստրներու խորհուրդին ներկայացուց հայոց պատրիարքին գանգատներն և Հայաստանի մէջ բարեկարգութիւնը հաստատելու համար պէտք ներկայացուց։

Գաբրիէլ էֆ. Նորատունկեան մինիստրներու խորհուրդին մէջ ազատօրէն պաշտպանեց հայոց պատրիարքին տեսակէտները և ստիպողական համարեց Հայաստանի մէջ տիրող անապահովութեան վերջ տալը։

Տրուած խոստումներու անորոշ և տարտամ վիճակը սակայն բնաւ չէր կրնար հանդարտեցնել ազգին յուզումը, որ արտայայտեցաւ չորեքշաբթի օր խառն ժողովի պահուն Ղալաթիոյ եկեղեցին համախմբուած քանի մը տաքարիւն երիտասարդներու գոյութեամբ և երեսփոխաններու պահանջումովը։

Երեսփոխաններու կողմէ Հայկ Խօճասարեան, ազգ. ժողովին դիւ-ատենապետը, արդէն խառն ժողովին ներկայացած էր, երբ ժողովուրդէն մէկ քանիներն ալ ներկայանալով կտրուկ կարգադրութիւններ պահանջեցին։

Վարչութեան կրօն. ժողովին անդամներէն ոմանք կը պահանջէին, որ պատրիարք և վարչութիւն անմիջապէս հրաժարին և ձեռնթափ ըլլան։

Քաղ. ժողովի անդամները յարմար նկատեցին, որ վերջին ու ազդու դիմում մը ըլլայ եկեղեցական պատգամաւորութեամբ մը միջոցաւ, որուն պիտի մասնակցէին Հմայեակ արքեպ. Դիմաքսեան և Գրիգորիս արքեպ. Յովհաննէսեան։

Միւս կողմէն, երեսփոխանաց գոհացում տալու համար, ազգ. ժողովը արտասովոր գումարման հաւանեցաւ վարչութիւնը, նաև ազգ. ժողովին տեղեկացնելու համար վարչութեան մինչև հիմա ձեռք առած միջոցները և անոնց արդիւնքները։

Արշարունի պատրիարք, ընկերակցութեամբ երկու եպիսկոպոսներուն, այցելեց եպարքոսին, դատական և կրօնից մինիստրին, պատերազմական մինիստրին և շէյխիւլ-իսլամին։

Իր դիմումը այս անգամ ունէր պաշտօնական երևոյթ և ամենախիստ արտայայտութիւն։

Արշարունի պատրիարք պատն բառերով գանգատած է նաև Տանիշ-բէյին, որուն այլ ևս ունէ դիմում կատարել աւելորդ համարեց, իր մտադրութիւնը արդէն պարզած ըլլալով։

Արշարունի պատրիարք սպառնացած է ոչ միայն հրաժարել, այլ և փակել եկեղեցիները և պատրիարքարանը, և բաղխել օտար դուռներ։

Դատական մինիստրը և եպարքոսը շատ ուշադրութեամբ նկատի առին հայոց պատրիարքին դիմումը։

Եպարքոսը խոստովանեցաւ, թէ այս սպաննութիւնները, բռնաբարութիւնները եւ աւարառութիւնները պատահական դէպքեր չեն եւ յատուկ նպատակով մը կը գործադրուին։

Եպարքոսը հաւաստեց, թէ Վանայ կուսակալը պաշտօնանկ եղած է և անոր յաջորդ կարգուած է ուրիշ մը, աւելի ձեռնհաս։

Զինուորական կարգադրութիւններ ալ եղած են և կառավարութիւնը վերջապէս որոշած է ձերբակալել և պատժել Վասպուրականի պատուհաս՝ Միր-Մհէն և Սայիդը։

Դարձեալ կը հաստատուի, թէ մինիստրներու խորհուրդը որոշած է լիազօր յանձնաժողով մը ղրկել Հայաստան, հոն ապահովութիւնը և անդորրութիւնը հաստատելու համար երկրին մէջ։

Այսօր ազգ. ժողովը դարձեալ պիտի գումարուի, և կը կարծուի թէ ժողովրդային դիմում պիտի ըլլայ ժողովին։

Այս տեսակ շարժում մը դժբաղդաբար նորէն կը ծառայէ ամբոխավարներու, որոնք կուզեն իրենց խախտուած վարկը վերահաստատել ազգային բողոքի արտայայտութեանց առաջնորդ հանդիսանալով։

Դաշնակցական պարոնները, որքան ատեն որ զինակիցներն էին Ջարդարար Իթթիհադին, միշտ ազգը համակերպութեան մղելու վրայ էին։ Հիմա անշուշտ ի նպաստ Իթթիհադին, արդէն կառավարութիւնը վարկաբեկ ընելու համար, աղմուկ հանել կուզեն։

Ասով Իթթիհադը երկու յաջողութիւն մէկէն կունենայ, թէ քիւրտերը և թէ հայերը դէմ հանելով արդէն կառավարութեան, և դաշնակցականները այս դաւաճան մեքենայութեան մէջ կը կատարեն դեր։

Շառայլ

## 750 ՄԻԼԻՈՆ ՖՐ.-Ի ՄԵԾ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՒ 200-Է ԱՒԵԼԻ ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐ

Սոֆիա, 17 յուլիս

Երկար ժամանակէ ի վեր է, որ Ֆիլիպէի հայութեան մէկ մասը մեծ ժառանգութեան մը խնդրով կը զբաղի։ Այժմ նորէն իրարանցում մը կայ ժառանգորդաց մէջն, որովհետև դրամատունը, ուր կը գտնուի ժառանգութիւնը, հրաւէր ղրկած է եղեր ազգային պատրիարքարան՝ ժառանգորդները երևան հանելու համար։

Հաջի Ղազար Գրիգորեան Հնդկաստան գաղթելով՝ յաջողած էր կարճ ժամանակամիջոցի մէջ մեծ հարստութեան մը տէր դառնալ։ Բոմբէյի մէջ շատ հողեր ձեռք ձգած էր։ 1774 թուին մեռաւ օտար հորիզոնի տակ և ձգեց իր հարստութիւնը անգլիական բանկա մը, կտակելով որ այդ գումարը իր ժառանգորդաց յանձնուի 40 տարի ետքը։ Մայր գումարը 1 միլիոն Թուման է, բայց մինչև ցարդ հասած է 750 միլիոն ֆրանկի։ Ժառանգորդները, որոնք մօտաւորապէս 200 հոգի կը հաշուին, չեն կարողացած մինչև ցարդ իրար գալ և դրամը ձեռք ձգել։ Եւ ահա այս վերջերս Ֆիլիպէի մէջ նորէն ժառանգորդաց միջև շահագրգռութիւնը յառաջ եկած է։ Մինչև ցարդ Ֆիլիպէի ժառանգորդներու թիւը 50-ի կը հանի։ Ասոնք յանձնախումբ մը ընտրած են, որ գործերը վարէ։ Յանձնախումբին մէջ են Անտոնեան և Էամէրճեան ու փաստաբան մը, որոնք Հնդկաստան պիտի երթան։ Բուլղար կառավարութեան օժանդակութիւնը ուզած են գործը գլուխ հանելու համար, խոստանալով կարգ մը բարեգործական ընկերութեանց նուիրել։ Ինչպէս կերևի, այս անգամ ալ արդիւնք մը չպիտի գոյանայ։ Ինչո՞ւ պատրիարքարանը աւելի լրջօրէն ձեռք չառնէր այս գործը և դրամը ապահովցնել ժառանգորդաց։ Ասոնց մէկ մասը Կ. Պոլիս, միւս մասը Եդիրնէ կը գտնուին։ Մենք կը կարծենք, թէ ազգ. պատրիարքարանը նոյնիսկ ազգային շահու տեսակէտով պէտք է ամբողջ ժառանգորդներուն վաւերաթուղթերը ձեռք ձգէ և ցանկ մը պատրաստելով հաստատէ, թէ որոնք են իսկական ժառանգորդները։ («Լուսարձակ»)

## ՊՐԻՆՑ ԻՒՍՈՒՖ ԻԶԶԷԴԴԻՆԸ

Կ. Պոլսից արժանահաւատ աղբիւրից «Рус. Сл.»-ի թղթակցին հաղորդում են հետևեալ մանրամասնութիւնները Թիւրքաց գահաժառանգ պրինց Իւսուֆ Իզզէդդինի Եւրոպա գնալու մասին։

Պրինցը մեկնեց Եւրոպա, որպէսզի մասնակցէ խաղաղութեան բանակցութիւններին, որպէսզի կազդուրվի և, վերջապէս, որպէսզի խուսափէ երիտասարդ-թիւրքերի վրիժառութիւնից, որոնց անկմանը նա քիչ չը նպաստեց։

Երբ Իւսուֆ Իզզէդդինը հասաւ Վիէննա, աւստրիական արտաքին գործերի մինիստրութիւնը ամեն ջանք գործ դրեց, որպէսզի պրինցը չը մասնակցէ խաղաղութեան բանակցութիւններին։ Այդ նպատակով մինիստրութեան գործակալութիւնները առան ոմն բժիշկ Կոնրադի վստահութիւնը, որը և համոզեց պրինցին բժշկվել իր սանատօրիայում։

Սանատօրիայում պրինցը պէտք է ենթարկվէր առանձին ռէժիմի։ Նրան առաջարկվեց բացարձակ հանգստութիւն, և ոչ ոքի նրա մօտ թոյլ չէին տալիս։ Անգամ պրինցի բոլոր գրութիւնները նախօրօք կարդում էր Կոնրադը և իբր թէ պրինցի ապահովութեան համար դրված գործակալները, իսկ լրագիրներին հաղորդվում էր ֆանտաստիկ տեղեկութիւններ պրինցի առողջութեան մասին։

Կ. Պոլսի պալատական շրջաններում այդ պատմութեան ներկայացումը չափազանց մեծ անհանգստութիւն առաջ բերեց։ Այս օրերս մեծ վէզիրը սուլթանին զեկուցում ներկայացրեց այն մասին, թէ անհրաժեշտ է յետ կանչել գահաժառանգին Թիւրքիա։

## Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՎԻԷՆՆԱՅՈՒՄ

Ներկայումս Վիէննայում տեղի ունեցող ս. Հաղորդութեան կոնգրէսը ստանում է Աւստրիայում տիրող կղերականութեան ազդեցութեան ու ոյժի ահարկու ցոյցի բնաւորութիւն։ Պապի պատուիրակ կարդինալ Րօսսումը ընդունվեց իշխանութիւններից այնպիսի պատիւներով, ինչպէս երբէք ցոյց չէ տրվել օտարազգի պետութեան դեսպանին. Վիէննայում գտնված միջոցին կարդինալը ապրելու է կայսերական պալատում Հօֆբուրգում իբրև Ֆրանց-Յովսէփ կայսրի հիւր։ Հօֆմարշալեան վարչութիւնը, բոլոր մինիստրութիւնները և այլն համագումարին ցոյց են տալիս ամեն տեսակ աջակցութիւն։ Արիստօկրատ ընտանիքների տիկնայք եռանդով ագիտացիա են մղում ամբողջ երկրում համագումարի մասնակցողների թիւը աւելացնելու նպատակով, որոնց մեծ մասը Վիէննայում ապրում է ոչ թէ իր հաշւով, այլ կազմակերպիչ մասնաժողովի հաշւով։

Զինուորական մինիստրի կարգադրութեամբ՝ համագումարին ներկայ գտնվելու ցանկացող օֆիցերներին տրվում է 6 օր արձակուրդ, նոյն տեսակ արտօնութիւն տրվում է նաև պօստային և այլ հաստատութիւնների պաշտօնեաներին։

Վիէննայի բոլոր հիւրանոցները լի են։ Հանդէսների կենտրօնատեղը լինելու է կիրակնօրեայ հանդէսը, որին մասնակցում են աւելի քան 100,000 մարդ կայսրի, կայսերական տան անդամների և մինիստրների գլխաւորութեամբ։

## «ԱՆԿԱԽ ԼԵՀԱՍՏԱՆԸ»

Լեհերի մէջ կոչ է տարածվում վերականգնելու Լեհաստանի քաղաքական անկախութիւնը։ Ըստ երևոյթին առժամանակ հանգստացած այդ շարժումը վերստին առանձին ոյժով վերսկսվեց մեր օրերում։

Օգոստոսի վերջերին լեհական Զակոպանէ կուրօրտում, որտեղից մի քանի տարի առաջ լսվում էր կոչ՝ բոյկօտի ենթարկել ռուսական դպրոցը, կայացաւ զանազան լեհական կուսակցութիւնների անդամների ժողով, որոնք ձգտում են վերածնելու հինաւուրց Լեհաստանը։ Կրակովի „Nowa Reforma" և Լվովի „Kurier Lwowski" լրագիրներում տպված են համագումարի հետևեալ բանաձևերը.

1) Ժողովվածները ձգտում են Լեհաստանի անկախութեան՝ լեհ ժողովրդի ինքնագիտակցութիւնը զարգացնելով և նրան կազմակերպելով, որպէսզի նա ընդունակ լինի յեղափոխական կռիւ մղելու անկախութեան համար. Լեհաստանի անկախութեան վերականգնումը անհրաժեշտ է մի ամբողջ ժողովրդի բարգաւաճման ու գոյութեան համար, մանաւանդ լեհ բանւոր մասսայի համար։

2) Ժողովվածները պարտաւորվում են պաշտպանել բոլոր կուսակցութիւնների մէջ անկախութեան ձգտող տարրերը, և անողոք կռիւ մղել ժողովրդի անկախութեանը դիմադրողների և հաշտարար քաղաքականութիւն վարողների դէմ։

3) Ժողովվածները պարտաւորվում են պաշտպանել այն կազմակերպութիւնները, որոնք ձգտում են ծանօթացնել ժողովրդի լայն խաւերին զինված կռւի նպատակների հետ, որ սպասվում է Լեհաստանում յեղափոխական ժողովրդական շարժման դէպքում, ուղղված առաջին հերթին ռուսաց պետութեան դէմ։

Լեհերի հանդէս գալը ներկայումս արգասիք է Բալկանեան թերակղզում տիրող աննորմալ կացութեան։ Պատերազմը համարվում է անխուսափելի։ Պատերազմին մասնակցելու են և Աւստրիան, և Ռուսաստանը, որոնց ոյժերը, ինչպէս յոյս ունեն լեհերը, մի փոքր կը թուլանան։ Իսկ դա հնարաւորութիւն կը տայ լեհերին կռւի դուրս գալ յանուն անկախութեան։

Դէպի լեհական շարժումները հանելուկային վերաբերմունք ցոյց է տալիս աւստրիական կառավարութիւնը։ Լեհական անկախութեան համար հարկ է հանդէս գալ նաև ընդդէմ Աւստրիայի։ Սակայն աւստրիական կառավարութիւնը արգելք չէ լինում լեհական համագումարների բանաձևերը տպելուն, մինչդեռ Գալիցիայում ռուսական լրագիրների մէջ գրաւվում են ամենապարզ բովանդակութեան յօդուածները։ Լուրերի համաձայն, լեհերի և աւստրիական կառավարութեան միջև գոյութիւն ունի գաղտնի համաձայնութիւն։ («Кав.»)

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ՅՈԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Ինչպէս գիտենք, Ամենայն Հայոց Կաթողիկոսը շրջաբերական կոնդակով յայտնել է Ռուսաստանի, Թիւրքիայի, Պարսկաստանի, Ամերիկայի և այլ տեղերի առաջնորդներին և ազգային եկեղեցական հաստատութիւններին, որ առաջիկայ հոկտ. 13-ին Էջմիածնում տօնվելու է հայ տպագրութեան 400-ամեակի և հայ գրերի գիւտի 1500-ամեակի միացեալ յօբելեանը, եւ հրաւիրել է այդ հաստատութիւնները մասնակցել այդ մեծ ազգային տօնին։

Կ. Պոլսի հայոց պատրիարքը ստանալով նոյնպէս այդ կոնդակը՝ յանձնել է Ուսումնական Խորհրդին՝ հարկաւոր կարգադրութիւնն անել։ Պէտք է ասել, որ մինչև այդ Կ. Պոլսում կազմված ոմն Լևոն Լոբենցի նախագահութեամբ մասնաւոր յանձնախումբը լուծվել է, ի նկատի ունենալով որ ոչ ոք չէ ցանկացել մասնակցել մի յանձնախմբի, որի նախագահը՝ ոճրագործութեան մէջ ամբաստանված մի անձն է։ Վերջապէս այդ յանձնախումբը, իբրև բոլորովին մասնաւոր, ոչ մի նշանակութիւն ունենալ չէր կարող։ Կաթողիկոսի կոնդակը ստացվելուց յետոյ Ուսումնական Խորհուրդը յանուն ազգային կենտրօնական վարչութեան որոշում է մասնակցել հոկտ. 13-ի տօնին և ընտրում է պատգամաւորներ՝ պ. պ. Ստեփան Մալխասեանին և բանաստեղծ Յ. Յովհաննիսեանին։ Իսկ Միացեալ Ընկերութիւնը, որ Թիւրքահայոց կարևորագոյն կրթական-լուսաւորական հաստատութիւնն է, յանձնել է Թիֆլիսի միայն մասնաժողովին՝ յանուն Միացեալի մասնակցել տօնին։ Բացի դրանից Կ. Պոլսում կազմվել է մի մեծ յանձնաժողով, բաղկացած զանազան գրականագէտներից, որ պէտք է մշակէ ծրագիր, թէ ինչպէս տօնել Կ. Պոլսում հոկտ. 13-ը։ Այդ յանձնաժողովին մասնակցում են նաև հայ-կաթօլիկ և հայ-բողոքական գրականագէտներ։

Թէ ինչպէս պէտք է մասնակցեն մեր դպրոցական հաստատութիւնները հոկտեմբ. 13-ի տօնին, դեռ յայտնի չէ։ Իբրև սխեմա կարող է ծառայել այն ծրագիրը, որ կազմել է Յովնանեան դպրոցի կողմից ընտրված մասնաժողովը։ Մասնաժողովը որոշել է առաջարկել հոգաբարձական խորհրդին հետևեալ ծրագիրը. 1) Հոկտ. 13-ին մասնակցել հոգաբարձական, ուսուցչական և աշակերտական կազմով ընդհանուր հոգեհանգստին, Վանքի եկեղեցում, եթէ այդպիսին տեղի ունենայ. հակառակ դէպքում, կատարել հոգեհանգիստ Յովնանեան դպրոցում. 2) երեկոյեան կազմակերպել դպրոցում գրական-երաժշտական երեկոյթ. գրական մասը բաղկացած կը լինի դասախօսութիւններից տպագրութեան և գրերի գիւտի մասին. 3) ուղարկել պատգամաւորութիւն դպրոցի կողմից Էջմիածին և 4) որոշ գումար յատկացնել յօգուտ համազգային դպրոցական ֆօնդի։

Երևի միւս դպրոցներն ևս կը ղեկավարվեն այս սխեմայով։

Այս բոլորից յետոյ զարմանալի է, որ «Հօրիզոնը» դարձեալ շարունակում է, այս անգամ ևս ոմն Շարքարունիի բերանով, ասել, թէ Թիֆլիսը, Բագուն, Պոլիսը ոչ մի նշանակութիւն չը տալով Էջմիածնի կարգադրութիւններին՝ կը տօնեն յօբելեանը նոյեմբերի 26-ին։

Վերին աստիճանի յանդգնութիւն է մի քանի Թայֆայականների անելիքով պարծենալ և խօսել Թիֆլիսի, Պոլսի, Բագուի մասին, երբ և Թիֆլիսը, և Պոլիսը և Բագուն տօնելու են հոկտեմբերի 13-ին։

Սեպտ. 1-ին Բագւում կայացած ժողովը որոշել է, ինչպէս հաղորդում է «Баку» լրագիրը, արձագանք տալ Էջմիածնի հրաւէրին։

Ամօթաբերը Թայֆայականների վարմունքն է, որոնք իրանց նեղ կուսակցական միտումների, իրանց ամեն փառասիրութեան համար ոչ մի միջոցի առաջ կանգ չեն առնում վիժեցնել հոկտ. 13-ի տօնը։

Հ. Ա.

## ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՆՈՐ ՇԷՆՔԻ ԲԱՑՈՒՄԸ

Այս տարի Ներսիսեան դպրոցը տեղափոխվեց իր նոր շէնքը, որի հանդիսաւոր օծումը անորոշ ժամանակով յետաձգված է, որովհետև կառուցման աշխատանքները դեռ ևս շարունակվում են։

Սեպտ. 1-ին ուսուցչական կազմի և աշակերտութեան ներկայութեամբ տեղի ունեցաւ հանդիսաւոր հոգեհանգիստ դպրոցի հիմնադիր Ներսէս Ե. կաթողիկոսի և հանգուցեալ բարերարների համար, ապա կատարվեց դպրոցական մաղթանք, որից յետոյ տեսուչ Յ. Խունունց մի քանի խօս-

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՔԱՂՔԵՆԻՈՒԹԵԱՆ ՃԱՀԻՃԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ*)

Հայկական իրականութեան մէջ մանր բուրժուական էլէմենտը երկար ժամանակ սնվել է նացիօնալիստական գաղափարներով։ Մանր բուրժուական իրականութիւնը՝ դա այսօրվայ հայ իրականութիւնն է իր հասարակական կեանքով, ներկայ հայկական կուլտուրայով, ներկայ գրականութեամբ ու գեղարուեստով։ Մանր բուրժուական նացիօնալիստական սկզբունքներն են, որ այսօր տիրապետում են հայ հասարակական, քաղաքական և կուլտուրական կեանքում։ Այդ իրականութիւնն է, որ իր մէջ խոշոր չափերով սնում ու զարգացնում է մեշչանականութեան, այն է՝ քաղքենիութեան Թունաւոր ֆերմենտը։

Ամբողջ երեք տասնեակ տարիների ընթացքում բուրժուական տենչանքն ու ռոմանտիկ մտքի գոհարները՝ պճնուած ազգային խիտ գոյներով՝ կազմել են նրա մտքի ու զգացմունքի լիամփոփ բովանդակութիւնը։ Ամբողջ երեք տասնեակ տարիների ընթացքում նրա մտքի և զգացմունքի վրա անընդհատ կերպով թագաւորել է ռոմանտիզմը՝ իր հայդուկային գաղափարներով։ Եւ այդ երեսուն տարվայ ընթացքում ո՜րպիսի բարձրութիւններ, ո՜րպիսի բուրգեր են կառուցվել հասարակական կեանքի ու մտքի սահմաններում, ո՜րպիսի սին «ազգային» հեռանկարներ, ո՜րպիսի աւետեաց երկիրներ են ուրուագծվել տաքարիւն ռոմանտիկների անհեռատես գլուխներում։ Եւ որքան մեծ է եղել ակնկալութիւնների այդ չափը, ո՜րքան լայն է եղել ձգտումների այդ սահմանները, նոյնքան էլ ծանր եղաւ ու յուսահատեցնող այդ «հմայիչ» երազների յօդս ցնդելը։ Այն ձգտումները, այն փայփայած գաղափարները, ապագայ «հայկական երկրի» այն հեռապատկերը, որ այնպիսի քնքոյշ գուրգուրանքի առարկայ էր դարձել հայ «ազգային» խաւերի համար, այն «վեհ ու սուրբ» գործը, «բազմաչարչար հայոց ազգի» այն «նուիրական դատը», որի անունը տալիս ազգային ռոմանտիկի սիրտը մի անօրինակ սրբազան դողով էր լցվում, այն դատը, որ իր նպատակներով, կարծես, ընդգրկել, հիպնոսացրել էր «համայն հայ ազգը» և կուրօրէն, տարերային ոյժով մղում է դէպի ցնորամիտ երազների աշխարհը,—ահա այդ տենչանքների, ակնկալութիւնների վառ աշխարհը յանկարծ դարձաւ մի ողորմելի պատրանք, մի աղքատիկ երազ...

— Ամբողջ երեք տասնեակ տարիներ մենք փայփայել ենք այդ գաղափարները,— դառնօրէն ողբում են այդ դատի գործիչները,—ամբողջ երեք տասնեակ տարիներ մենք մեր ազգային դատի համար զոհել ենք մեր հարստութիւնը, երիտասարդութիւնը, լաւագոյն իղձերը, վերջապէս, զոհել ենք մեր արիւնը և վերջ ի վերջոյ ի՞նչ ենք ստացել... Ինչո՞ւ մենք այժմ կանգնած ենք մեր ներքին կեանքում կատարված մի սոսկալի աւերածութեան առաջ։ Ինչու մեր նուիրական դատը պիտի այսպէս տապալվէր և ապա նոյնիսկ չարիք ու պատուհաս դառնար մեր գլխին... Մեր կառուցած ամրոցները ուրեմն օդային են եղել...

Ողբում են «ազգային» դատով տարված ռոմանտիկները, զգալով որ այժմ նրանք անելու այլ ևս ոչինչ չունեն յանուն ապագայի, որ նրանց առջև այժմ բացի իրանց փշրված երազներից ուրիշ ոչինչ չէ մնացել, որ նրանք այսուհետև ստիպված են վայր դնել իրանց զէնքերը և սուզվել մեշչանական, քաղքենիական տաղտուկ կեանքի միապաղաղ պանդուածի մէջ։

Սրանք հայ լիբերալիզմի փայփայած, տարիների ընթացքում գուրգուրած այն իդէալները, այն յոյսերն ու իղձերն էին, որոնք մօտ անցեալում այնպէս սոսկալի կերպով գահավիժվեցին իրանց երևակայական բարձրութիւնից։ Իրական կեանքի բնական ընթացքը խորտակեց, տապալեց «ազգային» քաղաքական ռոմանտիկների տարիների աշխատանքը։ Եւ յանուն այդ դատի կառուցված խոշոր, բայց փխրուն բուրգը փլվեց, հէնց որ Թիւրքիայի իրականութեան ծոցից փչեց նոյնիսկ կիսասահմանադրական թեթև քամին։ «Ազգային» նոյն քաղաքականութեան ոգին, որ ձգնում էր ողողել կովկասահայ իրականութիւնը, գոլորշիացաւ անմիջապէս, երբ նա բաղխվեց լէգալ պայմանների հետ և ազատագրութեան թափը ցնդեց հասարակական թմրած մտքերը։ Եւ այժմ խորտակված, յուսահատված՝ իր ցնդած երազների առաջ գլխիկոր կանգնած է ռոմանտիկ «յեղափոխականը»։

Այդ քաղաքականութեան ու ռոմանտիզմի վերջին արտայայտութեան ճիգը, որ առաւելապէս նպաստեց, արագացրեց հէնց իր անխուսափելի տապալումը՝ մի կողմից Էջմիածնի կենտրօնական ժողովն էր և միւս կողմից՝ Պետական Դուման, կենտրօնական ժողովը՝ դա սեփական անանկացման, ներքին հակասութիւնների ժխտողականութեան մի սոսկալի տարափ էր ազգային «գօնֆլիգտոնների» համար. այստեղ հրապարակ եկաւ նրա գործնականութեան տարրից խսպառ զուրկ լինելու փաստը, նրա քաղաքական կատարեալ տհասութիւնը, նրա մանր բուրժուականութեան, մեշչանականութեան ամբողջ պատկերը։ Իսկ Պետական Դուման մի փայլուն ապացոյց էր այն փաստի, թէ ո՜րքան ողորմելի ու ապիկար են այն մարդիկ, որոնք իրանց ամբողջ կեանքում փայփայելով «ազգային» կղզիացման, ազգային «առանձնայատկութեան և ինքնուրոյնութեան» գաղափարները, յանկարծ ընկել են համապետական ընդհանուր խնդիրների լուծման առաջ և մոլորվել։

Եւ ահա եթէ մենք ազգային այդ քաղաքականութեան, որի ներկայացուցիչը հայ բուրժուազական տարրն էր, արտաքին մի քանի փայլուն ու ճռճռան լոզունգները դէն գցենք, այն ժամանակ կը մնայ նրա առաւելապէս մանր-բուրժուական նացիօնալիզմի վատթար կերպարանքը, նրա ճահճացած բորբոսնած քաղքենիութիւնը իր ողջ մերկութեամբ։ Իսկ եթէ զէնքերը ցած դրած «ազգային» ռոմանտիկ գործչից հեռացնենք նրա ռազմական վակիրը, ապա հրապարակի վրա կը մնայ այսօրվայ հայ տիպիկ քաղքենին։

Ահա այդ քաղքենին է այժմ հայ հասարակական ասպարէզում, որ և հասարակական գործիչ է և օրինակելի նպատակ։ Քաղքենիութիւնը այժմ տիրապետող տարրն է հայ հասարակական կեանքում։ Ազգային հովերով մոլորված այդ քաղքենին այժմ կանգնած է իր ոյժի ու բարձրութեան վրա։ Շնորհիւ տաղտուկ, սպանիչ պայմանների, շնորհիւ քաղաքական և հասարակական ռէակցիայի, քաղքենին իրան զգում է այնպէս, ինչպէս ձուկը ջրի մէջ։ Քաղքենին գլուխ է բարձրացնում խեղդուկ, տափակ ու խաւար պայմաններում։ Մտավախութիւնն ու տափակութիւնը՝ դա քաղքենիութեան բնական յատկութիւններն են. նա ինքը մի ճախճախուտ է, որտեղ տիրապետում են գարշ զեռունները ու գարշահոտութիւնը. նա ինքը մի լճացած, նեխված միջավայր է, որի բնակիչները յուզվում ու վրդովվում են, երբ այդ հոտած իրականութիւնը փորձում են խառնել ու քրքրել։

Հայ ներկայ տիրող տարրը իր գորշ ու միապաղաղ իրականութեամբ քաղքենիութեան մի կատարեալ տիպար է։ Այստեղ կեանքը թմրած է, անշարժացած. բայց այդ թմրութեան ու անշարժութեան մէջ ներկայ իրականութիւնը քաղքենի տարրի համար հանգստի ու անդորրութեան մի երանաւէտ կայան է. նա անվրդով, անխռով է իր վիճակի մէջ. նա գոհ է և բաւական իր հասարակական մանր ու գծուծ բնազդների աշխարհում. նա գոհ է ու բաւական իր ապահով շրջապատով, որտեղ չը կան ցնցումներ, չը կան թափահարումներ. նա երջանիկ է ու զուարթ մանաւանդ իր ընտանեկան օջախի մէջ, որի շուրջը նա կուտակել է բարոյագիտական մի շարք նորմեր։ Ներկայ ընտանեկան-ամուսնական կեանքը նրա համար հոգեկան հանգստի մի հանգրուան է, ուր նա խղճի կատարեալ անդորրութեամբ վարագոյրի ետևում թարմացնում է օրվայ տափակութիւնից բթացած ջիղերը։

Այո, քաղքենին գոհ է իր հասարակական մանր, նեղ միջավայրով։ Ի՛նչ փոյթ սակայն, որ այդ միջավայրը մի ճահիճ է, որտեղ թագաւորում է գերեզմանային լռութիւնը, իսկ ինքը քաղքենին՝ նրա թունաւոր զեռունը։

Քաղքենին գոհ է ու երջանիկ իր ընտանեկան օջախի գաղափարով. հայ կնոջ «ամօթխածութեան» ու «բարոյականութեան» գաղափարներով նա շլացել է... Սակայն ի՛նչ փոյթ, որ նրա այդ օջախը վաղուց է իր մէջ հակասութիւնների մի ամբողջ խորխորատ բացել, որ նրա մէջ պառակտումն ու դաւաճանութիւնը համատարած, սպառնական երևոյթ է։ Ի՛նչ փոյթ, որ ամուսնական կեանքը իր ներկայ կաշկանդումներով կորցրել է խայտառակ ծանծաղամիտ քաղքենու փայփայած հիմնական սկզբունքը. ինչ փոյթ, որ այրը ալ է գնում։ Ի՛նչ փոյթ, որ նա, այդ տափակ քաղքենին, յանուն «ընտանեկան կեանքի սրբութեան»՝ պոզերով է ման գալիս, որ դրել է նրա գլխին նոյն «սրբութեան» պահապան կինը իր սիրեկանի հետ միասին. բաւական չէ միթէ, որ այդ օջախի արտաքինը վայելուչ ու անկեղծ լինի, բաւական չէ, որ ամեն ինչ վարագոյրով ծածկված ու շպարված լինի։

Նրա համար բարոյական է այն ամենը, ինչ որ իր արտաքին ձևերի մէջ վայելչութիւն ու խաղաղութիւն կը պահպանի։ Կեղծիքը, սուտը քաղքենիութեան գլխաւոր յատկանիշներից մէկն է. քաղքենու համար այդ կեղծիքը ճշմարտութեան գաղափար է դարձել. այդ յատկանիշները նրա մէջ տեղ-տեղ կուլտի, պաշտամունքի բարձրութեան է հասցված. վաշխառութեամբ պարապելը չէ խանգարում սակայն վաշխառութեան ու շահագործման պրինցիպի դէմ խօսել. շարլատանութիւնն ու ստախօսութիւնը չեն խանգարում կեղծիքի ու սուտի դէմ կեղծ բարոյագիտական ճառեր արտասանել։ Չէ որ այդ ամենը քաղքենին անում է «յանուն բարոյականութեան, յանուն մարդկային ու աստուածային» սկզբունքների...

Մանր-բուրժուական քաղքենի իրականութիւնը, ասում ենք, դա ներկայ հայ տիրող իրականութիւնն է. նա մի պահ, կարծես, զուրկ չէ ժողովրդականութեան սկզբունքներից. բայց ո՜րպիսի գռեհկութիւն է տիրում այդ սկզբունքի ըմբռնման մէջ. ազգայնամոլութեան, անհամբերողութեան, սեփական արժանիքի սին գիտակցութեան մի տեմ, ամօրֆ շաղախ է ներկայացնում այդ սկզբունքը։ Քաղքենու հասարակական ձայնը՝ դա ներքին կեղծիքի, ներքին սուտի մի փայլուն շպար է։ Այդ ձայնը նրա այն խօսքն է, որի տակ չկային քերով չէշտեց Ներսիսեան դպրոցի կատարած կուլտուրական մեծ դերը հայ կեանքի առաջադիմութեան գործում։

---

*) Տես «Մշակ» № 196.

Ինչպէս յայտնի է, Ներսիսեան դպրոցը հիմնվեց հանգուցեալ Ներսէս Ե. կաթողիկոսի ձեռքով մի այնպիսի ժամանակ, երբ համայն հայութիւնը թաղված էր անթափանցելի մտաւոր խաւարի մէջ և երբ ազգիտութիւնը թեատարած թագաւորում էր ամենուրեք։

Այս կրթարանը իր ամբողջ գոյութեան ընթացքում հանդիսացել է հայ ժողովրդի լուսատու փարոսներից մէկը ու մատակարարել ուսում և գիտութիւն։ Հայ գրական աշխարհին տուել է տաղանդաւոր գրողներ, հայ եկեղեցուն՝ բարեկիրթ և արժանաւոր սպասաւորներ, հայ մամուլին՝ բարեխիղճ աշխատակիցներ և հայ դպրոցին՝ քրտնաջան և տոկուն, ժրաջան մշակներ՝ ուսուցիչներ։

Ներսիսեան դպրոցը հայ մարդու իդէալն է եղել, նրա գուրգուրանքի ու ջերմ սիրոյ առարկան. նա կաթոգին խանդաղատանքով փարել է այս դպրոցին ու նուիրել իր լուման ի բարգաւաճումն այդ հաստատութեան։

Հայ ժողովրդի ջերմ սիրոյ արգասիքներից ամենահոյակապը այս նոր շէնքն է՝ համապատասխան մանկավարժական և առողջապահական վերջին խօսքին, որի խնամոտ ու վայելուչ պահելուն պիտի աշխատենք բոլորս։

Վերջը Ց. Խունունցը փափագ յայտնեց, որ դպրոցը շարունակ կանգնած մնայ իր կոչմանը վայելուչ բարձրութեան վրա և դարէ-դար մնայ անմար, անկործան։

Սալմաստեցի

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

### Կալուկուտը մեզանում

Նոր-Բայազէտ, 25 օգոստոսի

Հացաբոյսի հունձը վերջացաւ. այժմ արդէն ծեծում-կալսում են հացաբոյսը, որը միանգամից հասունացաւ շնորհիւ արեւմտեան կողմից փչող քամիների, որոնք օգոստոսի սկիզբներից արդէն սկսեցին չորացնել հացի արտերը և մասամբ վնասեցին հացահատիկներին։ Եթէ քամիները չը լինէին, հացաբոյսի հասկերը աւելի լիքը և պարարտ դուրս կը գային, այն ինչ այժմ շատ արտեր, մանաւանդ բարձրադիր տեղերում ընկածները, նիհար հասկեր տուեցին։ Այս տարի շատ աջող է առաջ գնում հացի կալսելը, քանի որ երաշտութեան ազդեցութեան տակ այդ աշխատանքը ընդհանրապէս առաջ է տարվում շատ կանոնաւոր։ Նախկին տարիներում այս միջոցին դեռ հատ-հատ էին լինում հասունացած արտեր, այն ինչ այժմ արդէն քիչ է մնում կալսելուց պրծնելու։

Մի ամբողջ ամիս է անձրեւ կաթիլ չէ եկել. այդպիսով երկարատեւ երաշտը կարող է աւելի վատ հետեւանքներ առաջացնել անասնապահութեան համար, չորացնելով բոլոր արօտները, որոնք ամենաանհրաժեշտ գործօններ են տաւարապահութեան և ոչխարաբուծութեան համար։ Այս տարի՝ հակառակ նախկին տարիների՝ մեր քաղաքի և շրջակայքի կալուկուտը առաջ է անցել, քան օրինակ Դարաչիչագի բաժինը, ուր ամեն տարի, որքան էլ մեզանից ուշ ցանէին, շուտ և արագ էր հասունանում հացաբոյսը՝ քան մերը։ Բայց այս տարի հակառակն է դուրս եկել։ Հացի արդիւնքը տեղ-տեղ բաւարար է երեւում, բայց ընդհանրապէս որոշ եզրակացութեան չեն եկել։ Արդիւնքի մասին կը գրեմ, երբ ճշգրիտ տեղեկութիւններ ունենամ։

Որսորդ

### Ներքին աւազակներ

Մեղրի, 20 օգոստոսի

Ամսիս 6-ին զինված 4 Թուրք աւազակներ Փերտավանի սարում, օր ցերեկով, կողոպտում են 4 ճանապարհորդների։ Մի յոյնից խլում են զարդեր, իրեր և կանխիկ փող՝ մօտ 600 րուբլու. մի օրդուբադցի Թուրք վաճառականից 8 գորգ, Թուրք քրահտարի երկու ջորին. և մի հայից խլում են վրայի չուխան ու արխալուղը և 30 ր. էլ կանխիկ փող։ Աւազակները, առանց դիմադրութեան հանդիպելու, հեռանում են և Կունասի անտառով անցնող ճանապարհին խլում են՝ Կէմանց գիւղացի երկու հոգուց 2 ջորի և աներեւութանում։ Պատմում են, որ այդ աւազակները օրէնքից խոյս տուած մթնաձորցի Մամադ, Հասանալի և նուադիցի Գիւլում Թուրքերն են, որոնց միացել են և ուրիշ պորտաբոյծ «իգիթներ»։ Վերոյիշեալ աւազակները, անցեալ տարի էլ, Մեղրիից Լիճք գիւղը տանող ճանապարհին կողոպտելով անցորդներին, Վանք գիւղացի Մանուչարին այնքան ծեծել էին, որ մի կերպ տուն հասնելով ողորմելին, երկու օրից յետոյ, մեռել էր։ Այդ նոյն աւազակները Գիւմորանց սարում, էլի անցեալ տարի, խլել էին մի շիւանիձորցի հայից մի ջորի, իսկ մի կէմանցի գիւղացուց խլելով ջորին՝ իրան, ջորեպանը, ողջ-ողջ կապել էին ծառին և քարկոծելով սպանել։

Անցեալներում մի խումբ աւազակներ պարսից սահման Արաքս գետը անցնելով՝ երեք շիւանիձորցիներից խլելով երեք ջորի կրկին անցնում են պարսից հողը։ Սահմանի Ալեքսեան պահականոցի հրամանատարը իմանալով զինւորներով ընկնում է աւազակների հետեւից և ջորիները յետ խլելով յանձնում է տէրերին։

Վերջին դէպքը, տարվայ այս ժամանակին, սովորական է և դեռ կը շարունակվի, քանի որ Պարսկաստանի վիճակը այսպէս անփոփոխ կը մնայ։ Բայց տեղացի՝ օրէնքից խոյս տուած աւազակները, որ մեր երկրի ներքին չարագործներն են հանդիսանում, պէտք է ամեն կերպ պատժվեն։ Նրանք տեղացի լինելով գիտեն ամեն ճանապարհ, ամեն անկիւն, ունեն պաշտպաններ, կերակրող-սատարողներ և կողոպուտը պարտկողներ են գտնում իրանց ազգակից կրօնակիցների մէջ։

Ի՞նչ են մտածում կրթութիւն ստացած մեր Թուրք եղբայրները, ո՞ւր են նրանք. Երբ են հանդէս գալու նրանք. Երբ են միջոցներ ձեռք առնելու մթութեան մէջ խարխափող եղբայրներին տարրական կրթութիւն տալու։

Ե. Վարդանեան

### ՑԵՄԵՆՏԻ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՆՈՎՕՌՈՍԻՅՍԿՈՒՄ

Տօննելնայա կայ. (Վլկ. երկ. ճ.), 30 օգոստ.

Տօննելնայա կայարանը գտնվում է Նօվօրօսիյսկից 17 վերստ հեռաւորութեամբ դէպի հիւսիս-արեւմուտք, 720 ոտնաչափ բարձրութեամբ ծովի մակերեւոյթից, կայարանին կից է կօզակների Վերխնէ-Բականսկայա գիւղը։

Այս կայարանից է սկիզբ առնում միջին բարձրութեամբ ցեմենտի մի լեռնաշղթայ, անցնելով Գայդուկից, Նովօրոսիյսկի արեւելեան մասով և վերջանում է ծովափնեայ Գելենջիկ գիւղում։

Այդ լեռնաշղթայի վրա շինված են ցեմենտի գործարաններ՝ մէկը Գելենջիկում, երեքը Նովօրոսիյսկում և երկուսը Տօննելնայա կայարանում։

Վերջին տարիներում ցեմենտի մեծ պահանջ կայ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում։ Այդ պատճառով էլ գործարանները համարեա թէ չեն կարողանում պատուէրներին բաւարարութիւն տալ։ Տօննելնայայի ցեմենտի քաշը աւելի է գնահատվում իր մաքրութեամբ, որը առիթ է տալիս գերմանացիներին՝ շտապել օր առաջ տեղը ձեռք բերելու գործարանի համար։

Հայ կապիտալիստների ուշադրութիւնն ենք հրաւիրում դէպի Տօննելնայա, որ աչքի առաջ ունենան և օգտվեն հանգամանքից։ 400,000 րուբլով կարելի է ունենալ մեծ և շքեղ գործարան նոր սիստեմի մեքենաներով, որը 24 ժամվայ ընթացքում կարտադրի 800 տակառ (տակառը 10 պուդ է) մաքուր պորտլանդեան ցեմենտ։

Ինչպէս լսում ենք, այդպիսի մի քանի գործարաններ էլ ուզում են հիմնել Գայդուկ կայարանում և Նովօրոսիյսկին կից Կաբարդինկա գիւղում։ Նովօրոսիյսկի քաղաքային ինքնավարութիւնն էլ էր ցանկանում մի գերմանացու հետ միասին ցեմենտի գործարան շինել Պադսեօլկա կոչված քաղաքամասում, բայց գերմանացին համաձայնութեան չը գալով անցաւ Տօննելնայա և հիմք դրեց երրորդ գործարանին։

Հ. Մակարեանց

### ՇՈՒՇՈՒ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԸ

Շուշի, 24 օգոստոսի

Շուշին իր հիմնվելու օրից սկսած, ինչպէս կենդանիների համար էր տներ կառուցանում, սկսեց տեղ ու հանգստարան սահմանել նաև յաւիտենական կեանքը անցնողների համար։

Սկզբում հայերը հանգստարանի տեղ ընտրեցին հէնց քաղաքի շրջապատում, ներսում, որտեղ կայ նաև նահատակի գերեզման, որ այսօր իսկ ուխտատեղի է կանանց դասի համար։

Ռուսները Շուշուն տիրելուց յետոյ, արգելվեց քաղաքի ներսում մեռել թաղել և դրա համար առանձին տեղ որոշվեց, քաղաքից դուրս, արեւելեան մասում, այժմեան բանտից քիչ հեռու, Արկաթալի և Հինոտ գիւղերի ճանապարհի կողքին։ Այսօր այդ գերեզմանոցը կայ, ուր թաղված են նաև ռուս աստիճանաւորներ։ Այդտեղ, չը նայելով որ բաւական հարթ է և ընդարձակ, սակայն մի առ ժամանակից յետոյ թողնվեց անգործադրելի, որովհետև ճանապարհը անցնում էր Թուրքերի մասով, իսկ ամեն մի հանգուցեալ թաղելու տանելու ժամանակ ծագում էին մի շարք անախորժութիւններ—Թուրք երեխաները հետեւում էին մարդկանց, ծաղրում, ծանակում և անկարգութիւններ անում։

Դրանից յետոյ հանգստարանի հարցը սուր կերպարանք առնելով, քաղաքի չորս եկեղեցիներից երկուսը—Ագուլեցոց և ս. Յովհաննու Մկրտիչը—ընտրեցին հիւսիսարեւելեան մասը, Ղայբալի գիւղի ճանապարհը, իսկ Ղազանչեցոց և Մեղրեցոց քաղաքի արեւմտեան մասը՝ Ջաւեստ գաւառի ճանապարհի կողմերը։

Որքան էլ անյարմար են այդ երկու հանգստարանները, որքան էլ նրանց տեղը զառիվայր և վեր են, այնու ամենայնիւ մարդիկ ուրիշ դրանից յարմարագոյն տեղ չը գտնելով՝ իրանց սիրելիներին ամփոփեցին այդ տեղերում։

Այդ երկու հանգստարանները այժմ լցվել և ընդարձակվել են։ Այդ երկու հանգստարաններից ներքինը, որտեղից անցնում է Ղայբալիի ու Կարկաժանի ճանապարհը, գտնվում է ծանր պայմաններում, արտասովոր վիճակում։ Տակաւին 90-ական թըւերին այս հանգստարանի մի ծայրում կառուցվեց քաղաքային սպանդանոցը։ Որքան էլ այն թաղի ժողովուրդը բողոքեց այդ բանի դէմ, բայց լսող չեղաւ և սպանդանոցի գարշահոտութիւնը ամառվայ ժամանակ անտանելի էր այն թաղի ժողովրդին։ Ոչխարների և մորթվող անասունների ու նրանց չօբանների ու գամփռների ոտների տակ կոխկրտվում էին մատաղերամ մանուկների, երիտասարդների և մեծերի գերեզմանները։ Արիւնակեր, կատաղած շները, որոնց վոհմակը շարունակ շրջապատած էր պահում սպանդանոցը, քանի-քանի անգամ է պատառ-պատառ արել երեխաների և կանանց երեսները և հանդերձները։ Այս և սրանց նման բողոքները ոչ ոք չը լսեց, ոչ ոք մի կարգադրութիւն չարեց, և երբ սկսվեցին 1905 և 1906 թ.թ. ընդհարումները, ժողովուրդը, օգտվելով հանգամանքից, գրոհ տուեց և կործանեց այդ սպանդանոցը, որի հետքն անգամ չը կայ։ Մաքրվեց գարշահոտութիւնը, անյայտացան շները և գիշակեր թռչունները, անհետ կորաւ և նրա կառուցանողի յիշատակը։

Ներկայումս ներքին հանգստարանի միջով է անցնում Խալֆալուի, Ղայբալուի և Կարկաժանի ճանապարհները, այնտեղով է անցնում և Եւլախ-Շուշի խճուղու ճանապարհը, որ ունի երեք պտոյտ, թէև այս անյարմարութիւններն էլ մի կերպ տանելի են, սակայն տանելի չէ այն ծանր հանգամանքը, երբ գարնան վերջերին Թուրք քոչւորները բարձրանում են լեռները, իսկ ամառվայ վերջերին վերադառնում իրանց ձմերանոցները։ Այդ երկու նուագներում նրանք իջնում են, բաւականին հանգըստանում, օրերով մնում և այդ ժամանակ իրանց ոչխարները, կովերը, գոմէշները, ձիերը և շները բաց թողնում ամբողջ հանգստարանում։ Երեխաները չը հասկանալով գերեզմանոցի նշանակութիւնը՝ թափում են ամեն տեսակ կեղտ և կոտրատում յուշարձանների անկիւնները։ Ցաւալի նկատվել է, որ կանայք գալով իրանց սիրելիների շիրիմներին տեսութեան, նախքան նրանց գերեզմանները արտասուքով ցօղելը, հարկադրված են եղել մաքրել նրանց վրայի մարդկային և շների կեղտերը։ Սրանք ի հարկէ անհաճոյ բաներ են, որոնց առաջը պէտք է առնել։

Սրանից մի քանի տարիներ առաջ այդ հանգստարանի հսկողութիւնը գտնվում էր վերակացուների ձեռքի տակ, որոնք թէև կանոնազանցութիւններ էին կատարում, գիշերները հանգստարանի խոտը ծախում էին քոչւորների վրա՝ արածացնելու, այնու ամենայնիւ թոյլ չէին տալիս հանգըստարանում քոչւորներին իջնելու և հանգստարանը պահվում էր որոշ չափով մաքրութեան մէջ. իսկ այս տարի արդէն նրա կեղտոտութիւնը հասել է ծայրայեղութեան։

Այդ հանգստարանը գտնվում է Ագուլեցոց և ս. Յովհաննու-Մկրտչի եկեղեցիների հոգաբարձուների տրամադրութեան տակ. նրանք պէտք է այդտեղի մասին հոգան, մտածեն և վայելչութեան մէջ պահելու հոգսը քաշեն, սակայն ինչպէս նկատելի է, նրանք այդ մասին մոռացութեան են տուած։ Բարւոք կը լինի, որ նրանք դրա համար մտածէին, խորհէին և կոնսիստորիայի միջոցով դիմէին գաւառապետին, կարեւոր կարգադրութիւն անելու, որ այնտեղ այլեւս քոչւոր չիջնի, իսկ մաքրութեան համար պահէին մի վերակացու հսկող։

Պետ

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Թիֆլիսի դումայի ձայնաւոր ինժեներ Ա. Բաբեանը մի միջնորդութիւն ներկայացրեց Կովկասի Փոխարքայի օգնական սենատոր Վասացիին՝ 26 հոգու ստորագրած թղթի հետ միասին՝ Թիֆլիսում պոլիտեխնիկական դասընթացքներ բանալու թոյլտւութիւն տալու մասին։ Սենատոր Վասացին ցանկութիւն յայտնեց, որպէսզի յիշեալ դասընթացքներին տրվի աւելի գործնական բնաւորութիւն, և առանձին ուշադրութիւն դարձրեց ջրատեխնիկական և էլեքտրոտեխնիկական բաժանմունքների վրա, որոնք շատ կարեւոր են կովկասի համար։

✦ Թիֆլիսում Հայրենական պատերազմի 100-ամեայ յոբելեանի տօնակատարութեանը մասնակցեցին նաև քաղաքի բոլոր միջնակարգ կրթական հաստատութիւնների սաները իրանց կառավարիչների առաջնորդութեամբ։ Այդ առիթով Վրաստանի էկզարխ Իննոկենտին շնորհակալական նամակ ուղարկեց կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուին՝ սաների հայրենասիրական ոգեւորութեան և օրինակելի կարգապահութեան համար։

✦ Թիֆլիսի քաղաքային տարրական դպրոցների մէջ վարժուհիների պաշտօնների համար տրված են աւելի քան 200 խնդրագիր, որոնցից միայն 29-ը ընդունված են փորձնական դասեր տալու համար։

✦ Թիֆլիսի տեղական ռուս օրաթերթերում լուր է տպված, որ Պետական Դումայի պաշտօնի համար ընդհանուր կուրիայի կողմից տրվում են Ա. Քալանթարի, Ա. Խատիսեանի, իշխ. Լ. Անդրոնիկօվի և Կ. Ջիբիձէի անունները։

---

միտքն է թաղնված. այդ ձայնը «կարեւոր» պարագայի համար ազատամտութեան մի դատարկ հնչիւն է, որի տակ, սակայն, ծածկված է խաւարամտութիւնն ու պահպանողականութիւնը։ Այդ ձայնը յաճախ հնչեցվում է իբր «յանուն մարդասիրական վեհ գաղափարների», սակայն նրա ետեւը տապ է արած շովինիզմն ու մտավախութիւնը։ Նա պատրաստ է հրապարակում պաշտպանելու հասարակական կուլտուրական առաջխաղացութեան գաղափարը առանց «ազգի խտրութեան», սակայն գործնական կեանքում նա հանդէս կը գայ ազգային իր սպեցիֆիկ կերպարանքով։ Ամեն ինչ կախված էջմիածնից, ամեն ինչ կախված ազգային «առանձնայատկութիւնից»...

Հայ հասարակական կեանքի ու նրա գաղափարական անդրադարձման ղեկը այսօր հայ բթամիտ քաղքենու ձեռքին է։ Այդ քաղքենին այսօր հայ մտքի «առաջադէմ», «արմատական» ղեկավարն է. նա շահագործում է գիրքը՝ որքան հնար ունի. հայ գիրը նրա ձեռքին մի միջոց է, որով նա խտացնում ու գունաւորում է հայ քաղքենիութեան տափակ մտքերը։ Հայ մամուլը իր քաղքենի ներկայացուցիչներով՝ նոր-նոր զարթնող առողջ դեմօկրատիզմի, նախապաշարմունքներից, անցեալի կապանքներից ազատ, ապագայ կեանքի լուսաւոր իդէալով տոգորված տարրի, գիտակից ու տակաւին դանդաղ կազմակերպվող սեփականազուրկ մասսայի կատաղի թշնամին է։ Քաղքենիութեան, մանր բուրժուականութեան կարճամիտ իդէօլոգը իր ամբողջ էութեամբ՝ առողջ դեմօկրատիզմի դէմ կռուող վայնասունի մի մարմնացումն է։ Քաղքենի մամուլը թունաւոր սունկ է, որ բուսել ու աճել է աղբակոյտի վրա. նրան սնունդ ու կեանք տուողը համապատասխան իրականութիւնն է։ Քաղքենի մամուլը բորբոսնած մի որջ է, որտեղ գիշերութիւնն ու փտումն է թագաւորում։ Քաղքենի մամուլի ձայնը՝ ճահճային գորտերի զզուելի կռկռոցն է, որ ուժեղ ու հնչիւն է դառնում միմիայն գիշերային աղջամուղջի մէջ։ Այդ է պատճառը, որ քաղքենիութեան մթնոլորտը սպանիչ է ու հեղձուցիչ. այդ է պատճառը, որ նրա միջավայրը զուրկ է ստեղծագործական ոյժից ու թափից, որ նա թշնամի է ամեն մի նոր երեւոյթի, որը ցնցումն ու թափահարումն է բերում իր հետ։ Այդ է պատճառը, որ կեանքի նոր երեւոյթը շարժում ու վրդովում է շրջապատը ապականող ճահիճը, որով անհանգստութիւն ու հոգս է պատճառում նրա անգոյն բնակիչներին։ Եւ երբ մի վայրկեան նորը սպառնում է և բարձրացնում բողոքի ու ցասման ձայնը, ահա ճահճի սովորական զեռուններից բարձր կանգնած ու հնչիւն ձայնով օժտված գորտերը հրապարակ են գալիս և իրանց զզուելի կռկռոցով ճգնում ճահճի անդորրութիւնը փառաբանել...

Հայ կեանքի հասարակական միջավայրը՝ մանր բուրժուական, քաղքենիական տրաֆարետ է, որ ձգվել ու տարածվել է ամենուրեք։ Քաղքենին խոշոր բուրժուազիայի քարշ տրոսկն է. Թէպէտ թուլամորթ, ազգային-ցեղական տարրերից հեռու կանգնած այդ բուրժուազիան խորշում է անմիջական մասնակցութիւնից այդ միջավայրում, սակայն նա գիտէ օգտագործել քաղքենիների, գաճաճամիտների այդ տեսակ բազմութեան գործակցութիւնը. նա ինքը թուլամորթ է՝ սոսկ հայ կուլտուրական իրականութեան նկատմամբ, բայց գիտակցում է, որ քաղքենիութիւնը նրա ձեռքին կոյր գործիք կարող է լինել. բուրժուան գիտէ, որ իր ոսկու փշրանքը ընդունակ է կուրացնել տխմարների վոհմակը։ Շնորհիւ բուրժուական տենդենցների, որ հիւսված է սպանիչ քաղքենիութեամբ, հայ կուլտուրական հաստատութիւնների մէջ կատարելապէս թագաւորում են նոյն տափակութիւնն ու ձեւականութիւնը։

Ահա հայ բարեգործական հիմնարկութիւնները, որոնց ղեկավարների աչքում իրանց անպատուղ գործունէութիւնը հասարակական կեանքի ալֆան ու օմեգան են կազմում։ Բուրժուան շպրտել է բարեգործութեան ծառաների առջեւ փշրանքներ ու ինքը անմահացել... բարեգործութեան գաղափարը քաղքենու համար շատ անգամ պաշտամունք է. «բարեխիղճ» հարստահարի տուած ոսկին բաւական է, որպէսզի, քաղքենու կարճամտութեան, հայ միջավայրում խաւարը տեղի տայ լուսաւորութեան առջեւ, յետադիմութիւնը առաջադիմութեան և աղքատութիւնը բարեկեցութեան։ Բուրժուական մտքի գոհարները, որ այնպէս փայփայանքով ու գուրգուրանքով սնում է իր մէջ հայ քաղքենիութիւնը, բթամտութեան կամ թուլամտութեան են հասցրել նրա գիտակցութիւնը. բթութեան ու տափակութեան թոյն այդ քաղքենին տենչում է պատուաստել նաև աշխատող մասսաների մէջ. բարեգործութեամբ հայ մանր բուրժուական կեանքում վճռական դեր է յատկացվում, ազգի զարգացման fundamentum-ը համարվում. բարեգործութիւնը ընդգրկել է հայ քաղքենիութեան ամբողջ «կուլտուրան», այդ ողորմելի ու տափակ կուլտուրան. ինքնուրոյնութիւնից, ինքնօգնութիւնից, ձեռնարկու ոգուց զուրկ ճապաղ քաղքենին աչքը միշտ տնկում է յղփացած բուրժուայի ոսկիների վրա։ Եւ բուրժուան իր ոսկու հորթից փշրանքներ պոկելով շպրտում է քաղքենու առաջ, ապա իր ոսկու ետեւից այնտեղ է ուղարկում՝ բարեգործութեամբ զբաղվելու համար՝ նաև անգործութեան մէջ ձանձրացող տիկիններին ու օրիորդներին, որոնց համար յանուն աղքատների երեկոյթներ ու պարեր, խաղեր ու զբօսանքներ կազմակերպելը մի զուարճութիւն է ու ժամանցի առարկայ։ Դրանք այն բարեգործական հանդէսներն են, որտեղ աղքատների համար պարողները անպայման սերտուկներով են հանդէս գալիս, իսկ օրիորդներն ու տիկինները՝ կեղծված հրապուրանքով։ Եւ բուրժուհիները յանուն բարեգործութեան աղմկում ու զուարճանում են, իսկ տափակ, ծանծաղամիտ քաղքենին հեռուից հրճվում է ու զգացվում։ Վերջինիս համար չը կայ «հայկական կուլտուրա», երբ չը կայ բարեգործական հաստատութիւն։ Սակայն այդ տիպի բարեգործութեան օբյեկտը միթէ միմիայն հայ աղքատն է։ Հայ սանքիւլօթը և քաղքենի հայ մամուլն ու գրականութիւնը այդ տեսակէտից բարեգործ բուրժուայի հանդէպ հաւասար գծի վրա են։ Եւ այսօր, քանի հասարակական կեանքի ղեկը բուրժուազիայի ձեռքումն է, բարեգործական հաստատութիւնները իրանց կուլտուրական բնոյթով անգամ պիտի «փայլեն» իրանց գործունէութեամբ։ Հայ դպրոցները, հրատարակչական, կուլտուրական ընկերութիւնները, լրագիրների խմբագրութիւնները, հայ գրող-յօբելեարը, կուլտուրական ամեն տեսակ տօները պիտի քարշ տան իրանց գոյութիւնը կամ մի կտոր հաց հայթայթեն մուրացկանութեամբ ու բթացած բուրժուայի աւելորդ ոսկիներով։ Այս է իրականութիւնը հայկական կուլտուրական-հասարակական կեանքում։ Եւ այս երեւոյթը միանգամայն համապատասխան է քաղքենու հասկացողութեանը. նա կարճատես է. նա ինքն է, որ բարեգործութիւնը պաշտամունք է դարձնում. նա ինքն է, որ բարեգործական մի ակտի առջեւ պատրաստ է մոռանալ իր Աստուծուն և պաշտել բուրժուա բարեգործին, աղօթելով ու խունկ ծխելով նրա առջեւ։ Խայտառակ իրականութիւն... Քաղքենու համար ինչ փոյթ, որ կարիքից տանջվող աղքատին փշրանքներ շպրտողը մի վաշխառու է, մի հարստահարող։

Ապիկար ու անշնորհք քաղքենիութիւնը միապաղաղութեան, միակերպութեան սիրահար է։ Ապիկարն ու անշնորհքը տիրել են նաև դպրոցական աշխարհին։ Այնտեղ էլ թագաւորում է ազգային ռոմանտիկ ոգին. քաղքենիութեան տրաֆարետը չէ ընդունում նոր գծեր ու վառ գոյներ։ Դպրոցը այդտեղ իրականութեան առաջ չէ ստորադասվում. իրականութիւնն է ստորադաս համարվում դպրոցի հանդէպ։ Ճահճացած կեանքը ճահճացած դպրոցներ է տալիս. նա իր մէջ չէ անում գործնականութեան այն տարրը, որի շնորհիւ դպրոցից դուրս եկած սաները պատրաստված լինեն կեանքի պայքարի համար։ Ազգային բուռնձն իր խոր կնիքն է դրոշմել դպրոցի վրա։ Ձեւականութիւնն ու մեռած տրադիցիան է, որ մտավախութեամբ է լցրել ժամանակակից հայ վարժարանը։

Այո, այսօր քաղքենիութիւնը հայ իրականութեան տիրող տարրն է. նա այժմ իր լիակատար գերումն է, բայց նա այսօրվայ օրին է պատկանում. նա ապագայի տարրեր չունի իր մէջ. նա ապրում է սոսկ ներկայով, ճապաղ, միակերպ ներկայով։ Բայց քաղքենիութեան շրջանը կեանքի զարգացման վերջին էտապը չէ. կեանքի ժխորը յարաճուն է. այդ ժխորը, կապված ապագայի հետ, իր խորքերից ապագայ հասարակութեան շերտեր է արտադրում։ Այդ շերտերը ներկայի ու անցեալի ժխտողները պիտի լինեն։ Գալու են նրանք, որոնք դէպի ապագայ են սեւեռելու իրանց հայեացքները, որոնց իղձերն ու տենչանքներն ապագայ լուսաւոր կեանքի հետ են շաղկապված լինելու։

Դա կը լինի նորագոյն հայ պատմութեան երկրորդ վերածնութիւնը, մի վերածնութիւն, որ հիմնովին պիտի տարբերվի անցեալ վերածնութիւնից։ Այդ հոսանքը, այդ շարժումը նեղ, սպեցիֆիկ չէ. նա չը պիտի գայ հայ տարրը կղզիացման, «առանձնայատկութիւնների» գաղափարներով անելու. նա չը պիտի գայ «ազգային» խեղդող մթնոլորտը պահպանելու։ Նա գալու է մթնոլորտը մաքրելու համար։

Նրա առաջ կանգնած պիտի լինի համամարդկայնութեան գաղափարը. նրա հարազատն ու եղբայրը պիտի լինի իր պէս արտադրող-արդիւնաբերողը որ ազգին ու կրօնին էլ պատկանելիս լինի նա. նրա թշնամին, հակառակորդը պիտի լինի նա, ով նրան կեղեքելու և շահագործելու է՝ որ ազգին և կրօնին էլ պատկանելիս լինի նա։

Պէտք է մաքրել, սրբել կուտակված աղտեղութիւնը. պէտք է ախտահանել որջերի բորբոսն ու նեխումը։ Մաքրման ու ախտահանման պրօցէսը՝ դա մեր երկրորդ վերածնութեան փաստը կը լինի։ Մեր ապագայ երիտասարդ սերունդը անշուշտ մեզանից աւելի երջանիկ կը լինի. նա անպայման ականատես կը լինի և կը գործի այդ վերածնութեան համար։ Արշալոյսը իր հետ կը բերի նոր, առոյգ կեանքի թափը՝ նոր ու թարմ, կենդանարար ոյժերով։ Ռօմանտիզմի մնացորդների տեղ՝ նա կը բերի գործնականութեան և առողջ րէալականութեան տարրեր. քաղքենիական ճահճում տիրող համատարած թմբիրի տեղ՝ եռուն կեանք, լոյս և կենսատու արեւի աթափեցուցիչ ջերմութիւն...

Սուրխաթեան

◆ Կախէթիայի երկաթուղու կառուցման կառավարական տեսուչ ինժեներ Ռախմանինի փոխարէն, որ փոխադրվեց այլ տեղ, նշանակված է ճան. հաղորդակցութեան ինժեներ Կիկոձէն, որ արդէն Թիֆլիսումն է և ստանձնել է իր պարտականութիւնները։

◆ Իշխան Սումբաթով-Իւժինին Տ. Նազարեան հետեւեալ շնորհաւորական հեռագիրն է ուղարկել Մոսկվա. «Հարաւային գեղափայլ աստղին, որ հիւսիսի պայծառ երկնակամարի վրա ցոլում է այնքան բարձր, գրականութեան և արուեստին 30-ամեայ իր փայլուն սպասաւորութեան առիթով՝ ողջունում են «Աղբիւր-Տարազ» հանդէսները և «Գրական-Գեղագիտական-Սալօնը»։ «Տարազում», ուր տպված է «Դաւաճանութիւնը», տպագրվում է այժմ հերթական համարում նաև պատկերը և Սալօնի մօտակայ երեկոյթներից մէկն էլ նուիրվում է նրան»։ Իշխանից ստացվել է հետեւեալ պատասխան-հեռագիրը. «Թիֆլիս, «Տարազի» խմբագիր Տիգրան Նազարեանին։ Հոգուս խորքից զգացված եմ ձեր չոյող հեռագրով։ Հոգով շնորհակալ եմ ամենի համար։ Իւժին իշխ. Սումբաթով»։

◆ Արտաշէս քահանայ Գափամաջեանը տեղական բոյսերից մի օծանելիք (мазь) կազմած լինելով «էկս-էկզէմօլ» անունով էկզէմա կոչված քորոտ հիւանդութիւնների դէմ՝ դիմել էր բժշկական կենտրոնական վարչութեանը խնդրելով թոյլատրել գործածել այդ դեղը։ Բժշկական վարչութիւնը պահանջել է ներկայացնել նոր դեղի մանրամասն նկարագրութիւնը։

◆ Մեզ խնդրում են տպել հետեւալը. «Ահա քանի օր է, ինչ ջրի կատարեալ սով է տիրում Սօլօլակի վերին թաղամասում, Վօզնեսէնսկայա, Կօջօրսկայա, Օրլօվսկայա և այդ շրջանի միւս բոլոր փողոցներում, ուր համեմատաբար հասարակութեան աղքատ ու չքաւոր մասն է ապրում։ Ջրային սովի այս երևոյթը քաղաքիս յիշեալ մասի համար շատ սովորական է դարձել։ Եւ չը նայած այդ առիթով բազմիցս կատարված դիմումներին, քաղ. վարչութեան պատշաճաւոր բաժանմունքում միայն մի պատասխան է տրվում—և այդ՝ միմիայն «գլխից հեռացնելու» նպատակով—այն՝ թէ գանգատաւորները եթէ իրանք տնատէր են՝ ապա թող իրանց համար յատուկ խողովակներ անց կացնել տան դէպի իրանց տների բակերը, իսկ եթէ վարձականներ են՝ ապա թող ստիպեն իրանց տնատէրերին յատուկ կրաններ ունենալու իրանց տներում։ Եւ սակայն բանն այն է, որ վերոյիշեալ քաղաքամասի տնատէրերը սեփական կրաններ ունենալու դէպքումն էլ չեն ազատվելու պարբերաբար կրկնվող ջրային սովից, քանի որ արդէն քաղաքի այդ շրջանակում այդպիսի կրաններ ունեցող տներն էլ զերծ չեն այդ ցաւից։ Ջրային այդ սովը սրանից դեռ մի քանի ամիս առաջ, երբ տակաւին կանգուն էր Վօզնեսէնսկայա փողոցի վրա գտնված քաղաքային առաջին կրանը, այնքան ուժեղ կերպով չէր շեշտվում, որովհետև այդ կրանը համեմատաբար նոյն փողոցի վերին ծայրին գտնվող կրանի՝ բաւականին ցածր դիրքի վրա էր գտնվում, ուստի և ջուր լինում էր։ Իսկ այն օրից, երբ քաղաքային ինքնավարութիւնը գիտակցաբար իր աչքերը փակելով այդ քաղաքամասի չքաւոր բնակչութեան կարիքի առաջ՝ քանդեց Վօզնեսէնսկայա փողոցի վրա գտնվող առաջին կրանը, փոխադարձ համաձայնութիւն կայացնելով մի հարուստ տնատիրոջ հետ, ահա այդ օրից ջրի հարցը կատարեալ ցաւ է դարձել քաղաքի յիշեալ թաղամասի չքաւոր բնակչութեան համար»։

◆ Սեպտեմբերի 20-ին տեղի կունենայ վրաց պատմութեան և ազգագրական ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը։

◆ Օգոստոս ամսվայ ընթացքում նաւթ է ստացված Բիբի-Հէյբաթում 8.949.713 փութ և միւս տեղերում՝ 26.539.437 փութ։

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 4 սեպտեմբերի

«Մշակի» այսօրվայ համարում կարդացի «Շահագրգռվածը» ստորագրութեամբ մի նամակ խմբագրութեան, որով հեղինակը հարցնում է Հայոց Դրամատիկական Ընկերութեան վարչութիւնից, թէ արդեօք Ընկերութիւնը ինչպիսի պիէս է համարում եւրօպական վէպից հայ հեղինակի ձեռքով փոխադրված մի պիէս՝ ինքնուրոյն թէ թարգմանական։

Նամակի հեղինակը գրում է, թէ նոյն հարցումն ինքը ուղղել է մասնաւոր կերպով Ընկերութեան նախագահին, բայց պատասխան չէ ստացել։

Ճիշդ է՝ «Շահագրգռվածը» ստորագրութեան տակ թագնված մի Թիֆլիսաբնակ յարգելի պարոն մի քանի ժամանակ առաջ վերոյիշեալ հարցը առաջարկել էր ինձ մի բաց նամակով, որ ինձ տուեցին ճիշդ այն րոպէին, երբ ես, ամարանոցից մի քանի ժամով վերադարձած լինելով, շտապում էի կայարան և արդէն իմ բնակարանից դուրս էի եկել։ Պատասխանը չուշացնելու համար՝ ես իմ առելիքը յայտնեցի Հայոց Դրամատիկական Ընկերութեան գրասենեկապետին, խնդրելով որ խօսի և նա բաց նամակով պատասխանի Շահագրգռվածին։ Նա էլ ճշդութեամբ կատարել է իմ յանձնարարութիւնը, սակայն ինչպէս երևում է՝ Շահագրգռվածը նրա բաց նամակը չէ ստացել։

Իմ պատասխանը հետեւեալն էր. ինձ առաջարկած հարցի որոշումը պատկանում է մրցանակաբաշխ յանձնաժողովի իրաւասութեանը, քանի որ այդ հարցը, որքան ինձ յայտնի է, չէ նախատեսված Ընկերութեան ոչ հրահանգներով, ոչ էլ առանձին որոշումով։ Ինչ վերաբերում է ինձ, իմ մասնաւոր կարծիքով՝ փոխադրութիւնը պէտք համարվի ինքնուրոյն գործ։

Նախագահ Հայոց Դրամ. Ընկ. վարչ.՝
Տ. Յովհաննիսեան

—

Թիֆլիս, 5 սեպտեմբերի

Յայտնում եմ գաւառների դպրոցական վարչութիւններին, որոնք դիմում են ինձ, խնդրելով նուիրել այս կամ այն դպրոցի գրադարանին իմ երկասիրութիւններից, ծրարի մէջ պէտք է դնել պօստային ծախս 10 կ. մարկա։ Լեոն Մանուէլեան

## ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Վանի վիլայէթի նոր վալին նախագծել է ժանդարմէրիա մտցնել Հայաստանում քրիստոնեաներից եւրօպական հրահանգչի ղեկավարութեամբ։ Զինուորական մինիստրը համակրում է այդ նախագծին։

◆ Վանից հեռագրում են, որ պայթած ռումբից սպանվեցին չորս, վիրաւորվեցին 17 մարդ։ Ռումբը իբր նետել է հայ յեղափոխական կօմիտէտը։

◆ Թիւրքաց ներքին գործերի մինիստրը հայոց պատրիարքին յայտնեց, որ այս օրերս մինիստրների խորհուրդը կը քննէ հողային հարցը, որ հայկական ջարդերի միակ պատճառն է ներկայանում։

◆ Կ. Պոլսից հեռագրում են «Р. Сл.»-ին. «Չորս մեծ պետութիւններ, որոնց յետոյ միացաւ և Իտալիան, վստահեցրին Բ. Դրան, որ կոմս Բէրխտօլդի առաջարկութիւնը չի քննվի ոչ եւրօպական կաբինետների մասնաւոր բանակցութիւնների ժամանակ, ոչ էլ որևէ կօնֆերէնցիայում, որովհետև րօպէն Թիւրքիայի ներքին գործերին միջամտելու համար բոլորից ընդունված է անպայման անյարմար։ Միւս կողմից՝ մեծ պետութիւնները յոյս ունեն, որ ներկայ Թիւրքական կաբինետը կիրագործէ խոստացված բարենորոգումները»։

◆ Սերբիան նորանոր բերդեր է կառուցանում Թիւրքական սահմանագլխին։

◆ Տրիպօլիսի արաբ ցեղերը չափազանց դժգոհ են, որ հաշտութեան մասին բանակցութիւնները վարվում են առանց իրանց գիտութեան և սպառնում են, հաշտութիւն կնքելու դէպքում, սրի քաշել Տրիպօլիսում գտնվող Թիւրքական բոլոր զօրամասերը։

◆ Ամէն օր Թիւրքերի գազանութիւններից բօլգարական սահմանն են անցնում տասնեակ մակեդօնական ընտանիքներ։ Բօլգարիայում ազգաբնակութեան տրամադրութիւնը մնում է ռազմական՝ Թիւրքիայի վերաբերմամբ։

◆ Վարշավաբնակ բօլգարները հայրենիք կանչվեցին զօրաժողովի պատճառով։

◆ Բօլգարական մամուլը պահանջում է, Սերբիայի օրինակով, արգելել հաց արտահանել Թիւրքիա։

◆ Ռուսական և ֆրանսիական կաբինետները յայտնեցին Սօֆիայի կառավարութեանը, որ նրանք թոյլ չեն տայ, որպէս զի Բալկանում status-quo-ն խախտվի, և Թիւրք-բօլգարական պատերազմի դէպքում թոյլ չեն տալ տէրրիտօրիալ նուաճումներ անել։

◆ Պարիզից հեռագրում են, թէ երբ Սազօնովը յայտնել է Բօլգարիային, որ Ռուսաստանը ներկայ րօպէն անյարմար է գտնում լուծելու մակեդօնական հարցը պատերազմով։ Անգլիան խորհուրդ է տալիս սպասել, մինչև իշխանութիւնը կանցնի Քեամիլ փաշային։

◆ Ռումինիան օրինագիծ է մշակել 18 պատերազմական նաւ կառուցանելու մասին։

◆ Սեպտ. 22-ին Ռեվել է գալու անգլիական նաւատորմը, բաղկացած հինգ զրահապատ յածանաւերից։

◆ Ռուսաց արտաքին գործերի մինիստր Սազօնովը նախագիծ է մշակել մինիստրների խորհրդին ներկայացնելու համար արտաքին գործերի մինիստրութիւնը վերակազմելու մասին։

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են, որ Սկանդինավիայում ռուս սօց.-դեմօկրատների համագումարը որոշել է համաձայնութիւն կապել տեխնիքական մտքով Պետական Դումայի ընտրութիւնների ժամանակ ձախակողմեան դեմօկրատների հետ լիբերալների դէմ, և լիբերալների հետ՝ աջակողմեանների դէմ։

◆ Օդեսայի նախկին քաղաքապետ գեներալ Տօլմաչեվը իր թեկնածութիւնն է դրել 4-րդ Պետական Դումայի անդամ ընտրվելու համար ծայրայեղ աջակողմեանների օգնութեամբ։

◆ Սեպտ. 5-ին լրացաւ մինիստրների խորհրդի նախկին նախագահ՝ Բօգրօվի ձեռքով Կիեվի թատրօնում սպանված Պ. Ստոլիպինի մահվան տարին։ Ռուսաստանի համարեա բոլոր աջակողմեան և նացիօնալիստական կուսակցութիւնները կատարեցին այդ օրը հոգեհանգիստ հանգուցեալի յիշատակին։

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

4 սեպտեմբերի

ՊԷԿԻՆ։ Լիւչինժէնը նշանակվեց դեսպան Ռուսաստանում։

ԲԵԼԳՐԱԴ։ Առաւօտեան ժամը 3-ին Կուսաղակ կայարանում արագ գնացքի խորտակման ժամանակ ծանր վիրաւորվեցին 3 հոգի, թեթև՝ 15 մարդ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Աստրախանի նահանգը յայտարարվեց սպառնական ժանտախտից։

ՎՕԼՕԳԴԱ։ Շիլով գիւղում հրդեհի ժամանակ այրվեցին երեք երեխայ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Առևտրի մինիստրութիւնը յայտարարում է, որ այս տարի Պետերբուրգի, Վարշավայի և Դոնի պօլիտեխնիկումում ընդունելութիւնը աւարտված է. յետագայ խնդիրները կը մնան անհետեանք։

Մոսկվայի ազնուականութեան պարագլուխ Սամարինը նշանակվեց Պետական Խորհրդի անդամ։

Պատւաւոր տոհմական քաղաքացի Սերգէյ Մօրօզովին յայտարարվեց Բարձրագոյն շնորհակալութիւն Մոսկվայում տնայնագործական թանգարան հիմնելու գործում աշխատելուն համար։

### ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

Թիֆլիս, Գրիգոր Միրզայեանցին.—Ձեր անունով նամակ է ստացված Մերվից։ Մտէք խմբագրատուն և ստացէք։

Թիֆլիս, գիւղատնտես Գրձելեանին.—Ձեր անունով փող է ստացված մեր խմբագրութեան մէջ։ Մտէք խմբագրատուն և ստացէք։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

4711 ՄԱԶԵՐԻ ՆԵՐԿ
Ընկուզեայ էկստրակտ
Ներկում է մազերը արագ և հիմնաւոր, նայած ցանկութեան, քնքոյշ շիկագոյնից սկսած մինչև կատարեալ սև։ Անվնասակար լինելը երաշխաւորված է։
Մի սրուակը 1 ր. 20 կ.։ Մեծադիրը 2 ռուբ.։
Պարֆիւմէրիա № 4711 Ֆերդ. Միւլհենս
Մատակ. Նորին Մեծութ. Ռուսաց Բարձր Դրան
ԿԷՕԼՆ Ր. վ. ● ՌԻԳԱ
Հիմնված 1792 թ.

4711
Ferd. Mülhens
CHATIN
Nuss-Extract

(М. 309206/309233) 10—1

Учредителя Бухгалтерскихъ Курсовъ
Н. В. Абраамяна,
вышли изъ печати и поступили въ продажу:

I
Руководство торг. бухгалтеріи
въ связи съ керосинов. производствомъ (2 изд. допол. и исправл.) Ц. 2 р. 50 к.

II
Таблица вычисл. процентовъ
отъ 1 до 360 дн. отъ 1/4 до 12% и на всѣ капиталы отъ 1 до 10,000 р. (2 изд.) Ц. 85 к.

III
Общедоступная справочн. книжка
для слушателей и слушательницъ бухгалтерск. курсовъ (2 изд.) Ц. 30 к.

IV
Журнальныя статьи
для опредѣл. дебета и кредита. Ц. 75 к.

V
Առևտրական հաշւապահութիւն
(հայերէն)
երկաթ., բակալ., կօլօնիալ և բամբակէ առևտրի վերաբերեալ։
Այս վերջին գիրքը լոյս կը տեսնի սեպտեմբ. վերջերին։ Նրանք, ովքեր կը կամենան ունենալ այս գիրքը, պէտք է վաղօրօք բաժանորդագրվեն։
Յիշեալ հրատարակութիւնների պահեստ Թիֆլիսում, հեղինակի մօտ, Նիկօլայէվսկայա փող. № 22.
(հ.կ.) 663. 10—1

Մինչև սեպտեմբերի 10-ը լոյս կը տեսնի
ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս. գրքը
ՄԱՐԳԱՐԷՆԵՐ ԵՒ ՀՐԵԻՑ ԱԶԳԻ
ՎԻՃԱԿԸ ՄԻՆՉԵՒ ՀԵՐՈՎԴԷՍ
Կրօնի նոր դասագիրքը, թոյլատրված Վեհափառ Հայրապետից, ծխ. դպրոցների Դ. տարվայ և միջն. դպրոցների Գ. դասարանի համար։ Դիմել Թիֆլիսի գրախանութներին։
(օ. մ.) 640. 5—3

ԿԱՐՍՈՒՄ
պատահմամբ, շտապով, գրեթէ կէս գնով ԾԱԽՎՈՒՄ Է 240 քառ. սաժէն ԱԶԱՏ ՀՈՂ երկու փողոցների վրա, 11 սաժէն ֆասադներով։ Դիմել՝ Թիֆլիս, Գօլօվինսկի պր. № 12, ատամնաբոյժ 662. Գարակիւլեանցին։ 2—1

ԹԱՒՐԻԶԻ
հայոց ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ համար
հարկաւոր են
1) ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ ռուսերէն լեզուի համար. նա պէտք է դաս տայ և թւաբանութիւն III բաժանմունքում։ Շաբաթը կունենայ 20–24 դաս։ Ռոճիկն է 350—370 թուման պարսից. ճանապարհածախս 30 ր.։
2) ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ հայոց լեզուի, ի բաղնութեան և ընդհանուր աշխարհագրութեան համար. շաբաթական 24 դաս, ռոճիկ 300 թուման պարսից. ճանապարհածախս 30 րուբլի։ Ցանկացողները դիմելու են Հ. Առաքելեանին, «Մշակի» խմբագրութիւն։

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ
ԿՈՒՐՍԵՐ
Գ. ԵՒ Մ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑՆԵՐԻ
Թիֆլիսում (Նիկօլայէվսկայա փող. № 36, Վօրօնցովի արձանի մօտ)։
Մանրամասն տեղեկութիւններ տրվում են Կուրսերի գրասենեակում ամեն օր՝ երեկոյեան ժամը 4—7-ը։
(ա.օ.) 579. 25—22

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ
ԱՐՀԵՍՏԱՆՈՑ
ՕՐ. Մ. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆԻ
Վերանորոգվում է աշակերտուհիների ընդունելութիւնը։ Ընդունվում են պատուէրներ կանացի և մանկական հագուստեղէնի, մատչելի գներով. առ. ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 6-ը։ Гановская ул. № 9.
(ե. հ.) 644. 3—3

Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
Առեւտրական Գիտութիւնների Կուրսերում
Նոր մեթօդով սովորեցվում են
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ
ազատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի վճարով։ Կազմակերպվում են հասակաւորներից երեկոյեան խմբեր։ Ճապաղական Դասընթացքներ արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր՝ ժամը 10—12-ը և 4—7-ը։ Միխայլօվսկի պր. № 24—4.
(ա.օ.) 643. 0—4

Ռ. ԽԱՆ-ԱԶԱՏ
ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
170 պատկերով։
Բովանդակութիւն.—1) Ներածութիւն։ 2) Եգիպտոս։ 3) Միջագէտք։ 4) Ասորեստան։ 5) Փիւնիկիա։ 6) Հայաստան։ 7) Արիական ցեղը։ 8) Իրան։ 9) Յունաստան։ 10) Մակեդոնիա։ 11) Հռոմ։
Բացի թեմական ու ծխական դպրոցներում իբրև դասագիրք ծառայելը, «ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ» կարող է և ընթերցանութեան համար գործածվել։
Գինն է 1 ր. 25 կոպ.
Դիմել Թիֆլիսի բոլոր գրավաճառներին։
Պատրաստվում է «ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ»։
(հ. կ.) 633. 4—3

ՄԻ ԻՆՏԵԼԻԳԵՆՏ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ
տրվում է մի հատ լուսաւոր սենեակ բոլոր յարմարութիւններով։ Գերադաս է համարվում տալ ուսուցչի կամ վարժուհու։ Այնտեղ պատրաստում են աշակերտներ կամ աշակերտուհիներ հայոց միջնակարգ դպրոցների համար։
Հասցէն՝ Шелковниковская № 11, բակի մէջ, վերին յարկում։ (Սրբա-Սրբադսկայա հրապարակին մօտիկ)։ (հ. կ.) 647. 3—2

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 24/4. Տելէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առեւտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են ռէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլօգրաֆիա (ռեմինգտօն և այլ. և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և զատ-զատ։ Ունկնդիրների թիւ շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 228 ունկնդիր, որոնցից 42 հոգի իգական սեռից)։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ
(ե. հ. կ.) 555. 0—16 Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ
ԱՐՇ. ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆԻ, ՏԻԳ. ՌԱՇՄԱՃԵԱՆԻ եւ ԱՒԵՏ. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ կազմած
„ԴԱՍԸՆԿԵՐ“
Ա. տարի (գունաւոր պատկերներով) չորրորդ տիպ. . . . . 40 կ.
Բ. տարի . . . . երրորդ տիպ. . . . . 50 կ.
Գ. տարի . . . . երկրորդ տիպ. . . . . 60 կ.
Դ. տարի . . . . . . . . . . . 70 կ.
Բոլոր գրքերն ունեն բազմաթիւ ձեռագիր յօդուածներ, յարմարեցրած ծխ. դպրոցների ծրագրի պահանջներին։ Գ. և Դ. տարին ունեն նաև շարադրութեան համար ձեռագիր նամակներ և շարադրական պատկերներ։
Ցանկացողները կարող են դիմել. Թիֆլիս՝ «Գուտտենբերգ», «Գիր», Երևան, «Արարատ», Յովհաննիսեան գրախանութներին. կամ կազմողներին՝ Երևան՝
Գումարով գնողներին կը լինի զեղչ։ (ե.հ.կ.) 649. 4—2

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Ն. Ո. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
(Գոյութիւն ունի 1895 թ.)
Հեղինակ առևտրական հաշւապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների։
Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ամսեայ դասընթացքում, ամենօրեայ պարապմունքներով։
Դասընթացքներում անցնում են.—Առևտրական և արդիւնաբերութեան զանազան ճիւղերի հաշւապահութիւն, նաւթարդիւնաբերութեան և նաւթագործութեան ճիւղի հետ միասին, զանազան մեթօդներով, կատարեալ իւրացումն կրկնակի իտալական սիստեմով և առևտր. թւաբանութիւն, առևտր. նամակագրութիւն, մուրհակային և առևտրական իրաւունքներ, քաղաքատնտեսութիւն, վատ ձեռագրի ուղղումն։
Ոչ պարտադիր առարկաներն են՝ 1) Օտար լեզուներ, 2) Ստենօգրաֆիա (սղագրութիւն) և 3) Ռեմինգտօնի վրա գրել։
Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։
Վկայագրերը տրվում են մինիստրութեան թոյլտւութեամբ։
Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից։ Խնդրագրերների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը։ Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Դասընթացքներին կից հաստատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստողական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։
Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну, Николаевская, 22, Телефонъ 7—44.
(կ. հ. ե.) 568. 0—11

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный